


4600



03 AUG 2005

2 NOV 2009

83

7-46

ՀԵՆՐԻԽ ՊԷՍԱԼՈՅՑԻ

ԻՆՀԱՐԴ ԵՒ ԳԵՐՏՐՈՒԴ

ՊԱՏՈՒՄԻ ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ



ԲԱՐԳՄԱՆԵՑ

ԽՈՐԷՆ ԾԱՅՐ. ՎԱՐԴԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԷ

معاری نظارت جلیله سنک رخصتیه طبع اولتشد



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԿՐ. ԵՒ ՎԻՄԱԿՐ. Գ. ՊԱՂՏԱՏԼԵԱՆ

Սուրբաւ հաւաւ հասկսի, քիւ 14.

1892

19 JUL 2013

4600

ՄԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

Զվիցերացի շէնրիս Պէսալոցցի բազմահոշակ մանկավարժի (1746—1827 թ.) «ԼԻՆՉԱՐԴ ԵՆ ԳԷՐՏՐՈՒԳ» պատումը հրատարակվեցաւ Գերմաներէն 1781 թ., եւ դաստիարակութեան խնդիրների եւ եղանակների հայեացքների փոփոխութիւնը գործելով, նոր մանկավարժութեան հիմքը դրեց: Նոր մանկավարժութեան հօր այս նշանաւոր երկի համառօտութիւնը ռուսերէնից թարգմանելն օգտաւէտ համարեցի:

Այս համառօտութեան մէջ պահպանված են այն խորին սէրը դէպի մարդկութիւնն եւ հաւատը դէպի մարդկային արժանաւորութիւնն, որով ներշնչված է մեծ մանկավարժի այս երկը: Համոզված եմ, որ Հայ ուսուցիչներն եւ ծնողներն գնահատելու են այս աշխատութիւնը:

Այս գրքոյկս, Մովսէս Խորենացու աշխարհաբար թարգմանութեանն Սահակ Մետրոպեան մրցանակի կէս գումարով հրատարակելով (միւս կէս գումարն նուիրվեցաւ Այնթապի վարդանեան ընկերութեան դպրոցին) պիտի վաճառվի ամբողջապէս յօգուտ հիլիկիայի հայկական երկսեռ դպրոցների:

Մասուցանում եմ խորին շնորհակալութիւնս բարձրարժանապատիւ Տ. Յովհաննէս Աւագ Քահանայ Մկրեանին՝ սպարութեան հոգսերն բարեպիտրաբար յանձն առնելուն համար:

Արիւի Ս. Խաչի վանքի ԽՈՐԷՆ ՄԱՅՐ. ՎԱՐԴԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԷ
1891, Հոկտ. 25



11237-Մ

Հ Ե Ն Ր Ի Թ Պ Ե Ս Տ Ա Լ Օ Ց Ց Ի Ի

Լ Ի Ն Հ Ա Ր Դ Ե Ի Գ Ե Ր Տ Ր ՈՒ Դ

Պ Ա Տ ՈՒ Մ Ի Հ Ա Մ Ա Ռ Օ Տ ՈՒ Ք Ի Ի Ն

Ա.

ԲՕՆԱԼ, գիւղում, Զվիցերայի մէջ ապրում էր որմնագիր Լինհարդն իր Գէրտրուդ կնոջ և եօթն մին միւսից փոքր զաւակների հետ: Լինհարդը բարի բայց թոյլ մարդ էր: Վատ ընկերներն հեշտութեամբ տանում էին նորան պանդոկ, որտեղ նա խմիչքի եւ խաղի էր ծախում աշխատութեամբ փաստակած բոլոր փողը: Այս պատճառով նորա կինն եւ զաւակները չափազանց կարօտութիւն էին քաշում եւ քիչ էր պատահում, որ Գէրտրուդն առանց արտասուքի անցուցանէր իր օրը: Նա շատ էր սիրում իր ամուսնին եւ զաւակներին. աշխատում էր ծածկել նոցանից իր վիշտն ու արտասուքները, սակայն լաւ հասկանում էր որ եթէ Լինհարդ չուզուէր նոքա բոլորովին մուրացկան պիտի դառնան:

Միանգամ — չարչարանքի աւագ չորեքշաբթի օրն էր — Լինհարդ շատ ուշացաւ տուն վերա-

դառնալու : Գէրտրուդ չկարողացաւ իրան պահել եւ դառն արտասուքով լացեց : Երեխաները շատ շփոթ վեցան , տեսնելով մօրն արտասուքը , եւ նորան շրջապատելով , սկսեցին գրկել եւ մխիթարել նորան եւ վերջն իրանք եւս լացին : Այդ բուգիին դուռը բացվեցաւ եւ Լինհարդ տեսաւ նոցա ամենքին այս վիշտի մէջ :

— Տէր Աստուած , ի՞նչ է եղել ձեզ , ի՞նչ է եղել քեզ , Գէրտրուդ , վախեցած հարցրեց նա :

— Մայրիկ , հայրիկն այստեղ է , ուրախ բացագանչեցին մանուկները :

Գէրտրուդ սրբեց արտասուքը եւ աշխատումէր հանգստանալ , բայց Լինհարդ հասկացաւ նորա արտասուքի պատճառը :

— Գիտեմ , ինչի ես լալիս , ասաց նա տխուր :

Գերտրուդ դուրս ուղարկեց մանուկներին , վճռելով բացարձակ խօսել իր ամուսնի հետ եւ յայտնել նորան բոլորն , ինչ որ այնքան ծանրացած էր նորա սրտի վերա :

— Ներքի ինձ , եթէ խօսքերս կը վշտացնեն քեզ , սիրելի Լինհարդ , բայց ես պիտի յայտնեմ քեզ այն , ինչ որ ինձ տանջումէ միշտ : Անգին Լինհարդ , մտածիր թէ ի՞նչ է սպառնում մեզ եւ մեր զաւակներին , եթէ դու չես փոխի քո սովորութիւններդ : Մենք մեր զաւակներով մութացկան կը դառնանք , մեր տունը կը խլեն ձեռներիցս եւ մենք կ'օտիպուինք դռնէ դուռ ընկնելու : Մտածիր , Լինհարդ , իմ եւ զաւակներիդ վերա , ուշքի եկ եւ ուղղիր կեանքդ : Աստուած կ'օգնէ քեզ :

— Ո՛հ Գերտրուդ , եթէ դու իմանայիր թէ որքան լու եմ հասկանում քո խօսքերիդ արդարութիւնը եւ թէ ի՞նչպէս տանջումէ այս ինձ անդադար : Բայց քեզ դեռ բոլորն յայանի չէ : մենք անհնարին դրութեան մէջ ենք : Պէտք է իմանաս , որ ես Հումմէլին , մեր տանուտէրին երեսուն գուլդէն (գուլդէն 80 կօպ .) պարաք ունիմ , եւ դու գիտես թէ նա ի՞նչ տեսակ մարդ է : եթէ ես չեմ մտնում նորա պանդոկը եւ խլումիչքի չեմ ծախսում այնտեղ բոլոր աշխատածս , նա սպառնում է իմ դէմ դատ բանալու եւ ես ակամայ ստիպուած եմ գնալ եւ ամեն օր նոր պարաքի տակ ընկնել :

Գէրտրուդ նորա խօսքերից սպառնալով քանի մի վայրկեան լուռ մնաց :

— Գիտե՞ս ինչ կայ , ասաց Գէրտրուդ վերջապէս . միակ անձն , որ կարող է մեզ օգնել , մեր գիւղատէր Արնէրն է : Ամենքն ասում են , որ նա բարի եւ արդարասէր մարդ է : Գնա նորա մօտ , սիրելի , պատմիր անկեղծօրէն բոլոր գործը եւ խնդրիր , որ պաշտպանէ քեզ Հումմէլից :

— Ես չեմ համարձակում նորա մօտ գնալ , Գերտրուդ , նա ինձ չէ հաւատայ : Ամեն մի գիւղացին կարող է նորան ասել , որ ես թոյլ մարդ եմ եւ սիրում եմ պանդոկ մտնել : Տանուտէրն հազար վկայութիւն եւ փաստեր կգտնէ իմ դէմ , եւ գործս աւելի կվատթարանայ :

— Բայց այս միակ միջոց է դժբաղդութենից ազատվելու : Մի՛ վախենար , սիրելի , գնա : Աստուած մեզ կօգնէ : Իսկ եթէ դու չես կամենում , ես ինքս կգնամ :

— Դու գնա, Գէրտրուդ, դու գնա Արնէրի մօտ եւ ամեն բան պատմիր նորան: Տէր Աստուած, ո՛րքան գոհ կլինիմ քեզանից:

— Լաւ, ասաց Գէրտրուդ, ես կգնամ:

Ամբողջ գիշերը Գէրտրուդ մտածում էր միւս օրուան այցելութեան մասին, եւ ջերմ աղօթում էր, եւ միւս օր վաղ առաւօտեան, իր ծծի երեխան ձեռին, գնաց նա դէպի Արնէրի ամրոցը, մօտ վեց վերստ գիւղից հեռու:

Բ.

Արնէր նստած էր լորի ծառի տակ դրան առաջ, երբ Գէրտրուդ մօտեցաւ նորան:

— Ո՞վ ես եւ ի՞նչ ես կամենում, բարեկամ, քաղցրութեամբ հարցրեց նա յուզուած եւ վշտահար կնոջը:

— Ես Գէրտրուդ եմ, որմնադիր Լինհարդի կինը, պատասխանեց նա:

— Ես քո երախաներիդ ճանաչում եմ: Նոքա գիւղի բոլոր միւս երեխաներից առելի մաքուր հագուստ ունին եւ լաւ են վարվում: Ասա ի՞նչ ես կամենում:

Այն ժամանակ Գէրտրուդ պատմեց Արնէրին թէ ինչպէս իր այր մարդը պարտք էր առել Հումմէլից երեսուն մանէթ եւ թէ ինչպէս նեղումէ տանուտէրն իր պարտապաններին: Նա ամեն բան պատմեց նորան ճշմարտութեամբ եւ խնդրեց, որ խղճայ իրանց եւ արգելէ Հումմէլին, որ չնեղացնէ:

Արնէր, առաջուց արդէն կասկած ունենալով տանուտէրի վերա, երկար եւ ուշադրութեամբ հարց ու փորձ էր անում նորանից ամեն բանի մասին եւ հիացած մնաց Գէրտրուդի ճշմարտախօսութեամբ եւ խոհականութեամբ: Նա սիրաշահեց Գէրտրուդին, եւ մեծարեց նորան թէյով եւ ասաց.

— Ես կվճարեմ տանուտէրին երեսուն մանէթ եւ վաղն առաւօտեան ինքս կգամ գիւղ: Այժմ Տէր ընդ քեզ, գնա տունդ եւ հանգիստ եղիր:

Գէրտրուդ թեթեւացած սրտով եւ ուրախութեամբ գնաց տուն եւ պատմեց Լինհարդին Արնէրի բարեսրտութիւն եւ խոստումն: Նոքա երկօրեան ջերմեանդ գոհութիւն տունին Աստուծուն եւ ասացին իրանց զուակներին.

«Ամեն օր աղօթեցէք Արնէրի համար, ինչպէս որ աղօթումէք ձեր հօրն ու մօրն համար: Նա հոգումէ մեր գիւղի ամեն բանի մասին, նոյնպէս եւ ձեր մասին»:

Յետոյ Գէրտրուդ մանուկներին ցոյց տուեց քանի մի մանր փողեր, որոնք Արնէր ընծայ էր ուղարկել նոցա եւ ամբողջ ընտանիքն այն երեկոն բաղձաւոր եւ ուրախ սրտով անցուց:

Գ.

Նոյն երեկոյեան Հումմէլ գնաց Արնէրի մօտ պատուէրներ ստանալու: Արնէր ի միջի այլոց ասաց նորան, թէ կամենումէ եկեղեցու շինութիւնը վերջապէս կարգի բերել:

— Մի՞թէ հրամանքիդ ճարտարագետն այժմ ազատ է, հարցրեց Հուսմէլ:

— Ոչ, բայց ձեր մէջ գիւղում կայ մի որմնադիր Լինհարդ: Ատրելի է արդեօք նորան հաւատար:

— Այո, նա լաւ մշակ է, չափազանց պարզամիտ մարդ է:

— Իսկ նորա ամուսինը լաւ կին է՞:

— Այո, աշխատաւոր համեստ կին է եւ դատարկ խօսել չէ սիրում:

— Լաւ, ասաց Արնէր, դու այժմ գնա տուն, իսկ վաղն մօտ ինն ժամին եկեղեցու բակում կլինիս: Ես կգամ այնտեղ:

Հուսմէլն ուրախ տուն գնաց: Նա առաջուց ուրախանում էր, որ իրան են հասնելու Լինհարդի ստացած բոլոր փողերը շինութեան համար, եւ չնայելով ուշ ժամին, կամեցաւ որմնադրի տունը մտնել:

Լինհարդ եւ Գէրտրուդ դեռ ընթրիքի էին նստած եւ շատ վախեցան Հուսմէլի ձայնը լսելով:

— Ընթրիքդ վատ չէ, ասաց նա կուպիտ ծիծաղելով, քեզ պէտք եւս չէ պանդոկ գալու, Լինհարդ: Գէտրուդին վերաւորեց նորա այս նկատողութիւնը:

— Մեզ հանգիստ թող, Հուսմէլ, ասաց Գէրտրուդ, — ամօթ քեզ, որ խեղճ մարդուն իր տանն անգամ նեղացնում ես:

— Անտեղի է հպարտութիւնը, Գէրտրուդ: Մի, մտանար որ դուք ինձ պարտք ունիք, բայց ես կուսիլ չեմ կամենում, ես միշտ պատրաստ եմ եղել Լինհարդին օգնելու:

— Այո, դու նորան ստիպումես խմել եւ խաղալ քո պանդոկում, — այս չէ՞քս օգնութիւնդ:

Հուսմէլին շատ դիպաւ այս խօսքը, բայց իրան զսպեց եւ ասաց. թող միայն նա վճարէ իր պարտքը, ինձ աւելի ոչինչ պէտք չէ: Բայց ահա քեզ մի ապացոյց, որ դու անարդար ես իմ վերաբերմամբ. ես մեր պարոնին առաջարկեցի, որ եկեղեցու շինութիւնը Լինհարդին յանձնէ: Նա այս մեծ գործը ստանալով շատ փող կվաստակէ: Սա մի՞թէ օգնութիւն չէ:

Լինհարդ շատ շնորհակալութիւն յայտնեց նորան, բայց Գէրտրուդ լուռ էր, սրովհետեւ զգումէր, որ տանուտէրի խօսքերի մէջ չար մտք կար:

— Վաղն ինքն պարոնը պիտի գոյ գիւզ, աւելացրեց Հուսմէլ:

Մենք այդ արդէն գիտենք, ասաց Լիզէլին, Գէրտրուդի աղջիկը:

Հուսմէլ զարմացած նայեց նորան եւ խկոյն դուրս գնաց: Նա զգումէր Գէրտրուդի իրան հետ վարուելուց, որ իրան մի վատ բան է սպասում:

Թէպէտ շատ ուշ էր արդէն, բայց տուն վերադարձած, նա կանչել տուեց Լինհարդի երկու դրացիներին և նոցանից իմացաւ, որ Գէրտրուդն ամբողջ էր գնացել: Նա շատ շփոթվեցաւ և պատուիրեց նոցա, որ դիտեն ամեն բան, ինչ որ կը պատահէ Լինհարդի տանը:

Գ.

Միւս օրն առաւօտեան 9 ժամին, Արնէր եկեղեցու բակ եկաւ: Հուճմէլ և շատ գիւղացիներն այնտեղ էին արդէն: Նոր շինութեան համար տեղը դիտելուց յետոյ, Արնէր Լինհարդին կանչելու ուղարկեց: Լինհարդ նոր էր դուրս գնացել տնից, և Գէրտրուդն որոշեց, որ ինքն գնայ նորա տեղ և Արնէրին իր կասկածները յայտնէ: Երբ Լինհարդի փոխանակ նա մտեցաւ Արնէրին, Հուճմէլ վախեցաւ եւ դեղնեց: Արնէրն այս նկատեց:

— Ի՞նչի դու եկար քո մարդուդ տեղ, ասաց Արնէր: Բայց միւսնոյն բան է: Միայն ասա նորան, որ գայ իմ մօտ. ես կամենումեմ քանի մի շինութիւններ նորան յանձնել:

Գէրտրուդը լուռ կանգնած էր, և չէր համարձակում խօսել:

— Ի՞նչի լուռ ես: Կարծումէի թէ դու կուրախանաս:

— Ահ, պարոն իմ, ասաց Գէրտրուդը, այդ շինութիւնները շատ մօտ են պանդոկից:

Ամբոխի մէջ ծիծաղի ձայն լսվեցաւ, իսկ Հուճմէլ շտապով առաջ եկաւ և ասաց:

— Դու ի՞նչ գործ ունիս իմ պանդոկիս հետ:

— Ձէ որ քո մասին ոչ ոք ձայն չէ հանել, Հուճմէլ, սպասիր մինչեւ որ կարգը կհասնէ, ասաց Արնէր: Ի՞նչից ես վախենում, Գէրտրուդ:

— Բաներ մարդը, պարոն, աշխատելուց յետոյ, կամենումէ խմել, եւ նա դժուար թէ կա-

րօղ է պահել իրան, եթէ նորան ամեն կերպով, թէ համոզելով թէ ծաղրելով, քարշումեն պանդոկ: Իսկ եթէ որ մտաւ այնտեղ, — վերջացաւ: Այնտեղ մինչեւ վերջին կօպէկը կհանեն նորանից:

Այն ժամանակ Արնէր գարձաւ Հուճմէլին եւ հարցրեց թէ ճշմարիտ է արդեօք, որ նորա պանդոկում չունենոր մարդիկներին ստիպում են մինչեւ վերջին կօպէկը վատնել:

Տանուտէրն այնպէս շփոթվեցաւ, որ հազիւ կարօղացաւ արտասանել:

— Այդ բոլորը ... հնարած բաներ են:

— Մի՞թէ դու ինքդ չէիր, որ գովումէիր երէկ իմ առաջ Գէրտրուդին:

Հուճմէլ բոլորովին շփոթվեցաւ, իսկ Արնէր դարձաւ երկու ծերունիներին եւ հարցրեց նոցանից թէ ճշմարիտ է արդեօք Գէրտրուդի ասածը:

— Բոլորովին ճշմարիտ է, պատասխանեցին նոքա, բայց այնպէս ցած ձայնով, որ Հուճմէլ չկարօղանար լսել:

— Լաւ, նոյնպէս ցած ձայնով ասաց Արնէր, եւ յետոյ բարձրաձայն շարունակեց. դու գնա տուն, Գէրտրուդ, ասա մարդուդ, որ իմ մօտ գայ, եւ ոչնչից մի՛ վախենար: Իսկ քեզ հետ մենք յետոյ կխօսինք, ասաց նա Հուճմէլին. ես վաղուց արդէն մտածումեմ թէ տանուտէրը պանդոկ պիտի չունենայ: Այնուհետեւ նա ուրիշ գործերի մասին խօսեց եւ յետոյ տուն գնաց: Այն երեկոյեան ոչ ոք պանդոկ չմտաւ, որով շատ զայրացաւ տանուտէրը:

Ե.

Քիւղացիներն ամենեւին չէին սիրում Հումմէլին եւ վախենում էին նորանից, ու սոսի նոքա անկեղծ ուրախանումէին նորա գլխին եկած փորձանքի վերա եւ համարումէին նորա վատ գործերը, որոնց թիւը քիչ չէր: Մանաւանդ շատ էին խօսում նորա վարմունքի մասին Բուդիի հետ, որն Հումմէլի շնորհով այժմ բողբոջին աղքատացել էր: Տանուտէրը կամեցել էր իրան սեփականացնել նորա հօգը — գեղեցիկ արօտատեղ — եւ դատ սկսելով նորա դէմ, կաշտուել էր վկաներին եւ գիւղական գրագրին: Նախկին գիւղատէրը, Արնէրի պապը, որ մի տարի առաջ մեռել էր, բարի, հաւատ ընծայօղ եւ թոյլ մարդ էր: Նա բողբոջին հաւատումէր Հումմէլին, խորվել էր, եւ խեղճ Բուդին զրկվել էր իր հողից: Այս ամենքի առաջն էր կատարվել եւ գիւղացիներն այժմ կենդանի կերպով յիշեցին այն:

Սակայն Հումմէլ չէր յուսահատում: Նա մեծ նշանակութիւն չէր տալիս Արնէրի խօսքերին, լաւ յիշելով իր ազդեցութիւնը նորա պապի վերա եւ յոյս ունէր, որ առանց դժուարութեան կկործանէր Լինհարդին, որին այս բոլոր դժբաղդութեան պատճառն էր համարում: Նա միւս օրն եւ եթ սկսեց ներգործել իր դրացիներից սմանց օղով մեծարելով — այս անգամ ձրիաբար, — նա շուտ նորից իր պանդոկն ամբողջ մի ամբոխ քարչեց, եւ ինքն ուղարկեց կանչելու Յովսէփին,

Լինհարդի գլխաւոր օգնականին, որ լաւ մշակ էր, բայց շատ աւազակ մարդ:

Հումմէլ նորան փող եւ ճրի խմիչք խօստացաւ, եթէ նա այս երկու բան կկտարէ. նախ պիտի համոզէր Լինհարդին. որ շինութեան համար աւազաքար առնէ մերձակայ քարահանքից, եւ երկրորդ շողախի մէջ պիտի խառնէր մի նիւթ, որը Հումմէլի խօսքով շողախին առանձին ամբողջիւն կտար:

— Ծաղախի մէջ խառնելը դժուար բան չէ, իսկ Լինհարդին համոզել, որ աւազաքար առնէ — սա մի խնդիր է, պտտասխանեց Յովսէփը. չէ՞ որ նա եւս փոքր ինչ հատկանումէ:

— Լինհարդը շուտ համոզվող եւ թոյլ մարդ է, նորան ամեն բանի մասին կարելի է համոզել:

— Ասենք Լինհարդի հետ գլուխ կհանեմ, բայց չէ՞ որ պարոնն եւս կտեսնէ, որ մենք վատ քար ենք վերցնում:

— Կարծես պարոնը շատ է հասկանում:

— Հաւատացած ե՞ս այդ մասին:

— Ի հարկէ, դու միայն Լինհարդի հետ բանդտես, իսկ պարոնի մասին խօսելն անգամ սէտք չէ:

— Լաւ, բայց տես, փողը չմոռանաս:

— Հանգիտ եղիր, ես իմ բանս գիտեմ, պտտասխանեց տանուտէրը, խարերային առտա օղի խմեցնելով:

Նա շատ բաւական էր իր հնարադիտութեամբ:

2.

Այս միջոցում Լինհարդ գնացել էր ամրոց եւ այնտեղից չափազանց ուրախ վերադարձել: Օրը շաբաթ էր, եւ Գէրտրուդը շտապում էր ամեն բան տան մէջ կարգի բերել, տօնի պատրաստութիւն տեսնելով: Մանուկներն ուրախութեամբ օգնում էին նորան եւ միեւնոյն ժամանակ սերտում էին մի երգ, որով կամենում էին իրանց հօրը դիմաւորել: Լինհարդի սիրտը շատ շարժվեցաւ մանուկների ողջոյնով եւ արած ընդունելութեամբ, նոցա ուրախ դէմքով եւ պինդ համբուրելով նոցա, մտածում էր. Աստուած իմ, ինչպէս էի կարողանում արհամարհել այսպիսի բազդաւորութիւնն եւ այսքան ժամանակ պանդոկում անցկացնել: Եւ նա հաստատապէս վճռեց ուղղվել եւ ինչ որ կարող է, ամեն բանն անել իր կնոջ եւ մանուկների բազդաւորութեան համար:

Գէրտրուդը տան ամեն բան կարգի բերելուց յետոյ, նստեց Լինհարդի կողքին եւ նորանից խնդրեց, որ մանրամասնաբար պատմէ, ինչ որ եղել էր ամրոցում: Եւ Լինհարդը պատմեց թէ ինչ քաղցրութեամբ էր ընդունել նորան պարոնը, ինչպէս գինով մեծ արել, հարցուփորձ արել իր գործերի մասին, եւ համոզել թողնել վատ ընկերներին եւ արբեցութիւնը, թէ ինչպէս գովել էր Գէրտրուդին, ինչպէս մանրամասնաբար հարցուփորձ արել շինութեան մասին, գրեթէ հարցաքննել եւ այնպիսի խորհուրդներ տուել, որ

երեւում էր թէ ինքն լաւ է հասկանում այս գործը: Եւ թէ վերջապէս ինչպէս պատուիրել է իրան գիւղի ամենալքատ բնակիչների անուններ տալ, որոնց կամենում է վարձել աշխատելու, օրական 25 կրէօցէր վճարելով:

— Իոկ դու որոնց անուններ տուիր:

— Ամենից առաջ Բուդիի, յետոյ դարձեալ քանի մի գիւղացիներին, որոնք աւելի ծանրաբեռնըված են երախաներով:

— Ահա այդ լաւ ես արել:

— Բայց Յովսէփն ինձ տարակուսեցնում է:

Նա ինչ որ շատ է պնդում, որ շինութեան համար աւագաքար առնեմ. այս քարից շինված պատը հինգ տարի չէ դիմանայ: Իսկ երբ ես բուրովիին մերժեցի նորա խօսքը, նա շատ բարկացաւ, թէպէտ ասացի նորան, որ պարուն ինքն էր ցոյց տուել թէ ինչ քար պէտք է գործ դնեմ շինութեան համար:

— Այո, շեշտելով ասաց Գէրտրուդը. դու պիտի շատ չհաւատաս Յովսէփին. նա այսօր նորից շումմէլի մօտ էր:

է.

Տանուտէրը, շինութեան վերանշանակված գիւղացիների ցուցակը ստանալով, շատ դժգոհ եղաւ ընտրութենից. ցուցակի մէջ նորա համախոհներից ոչ ոք չկար, եւ ամենքը գիւղի ամենաչունեւոր մարդիկն էին:

— Կարելի է նոյնից միտոյն տրամադրել:

ինձ հետ լինի: Պէտք է այսօր եւեթ նորա հետ խօսիմ:

Հումմէլ պիտի յայտնէր գիւղացիներին պարոնի հրամանը եւ ամենից առաջ Բուտի մօտ, գնաց որպէս զի ազատվէր ամենից աւելի իրան անախորժ այցելութենից: Խիղճը միշտ տանջումէր նորան, երբ հանդիպումէր Բուդիին:

Այն միջոցին Բուդին մեծ վշտի մէջ էր. փոքր ինչ առաջ մեռել էր նորա կինը, իսկ այժմ մեռնում էր նորա սիրելի մայրը: Հիւանդը պառկած էր յարդեայ անկողնի մէջ, իսկ վերան մինչեւ անգամ առնելու բան չունէր:

— Բեր յետոյ չոր տերեւներ, Բուդի, կարծես սառչումեմ, ասաց հիւանդ մայրը:

— Ահ մայրիկ, աւելի լաւ է անտառը գնամ, չոր ճիւղեր բերեմ:

— Չէ, աղանեակս, այդ հետու է, իսկ ինձ երկար միայնակ պիտի չլծողնես, մենք արդէն շատ ժամանակ չունինք միասին մնալու: Շուտով, Բուդի, դու կազատվիս իմ հոգեւերկց:

— Մայրիկ, այդ մի՛ տաք: Մի՞թէ մեզ պիտի ձգես: Իսկ ես թշուառս չեմ կարողանում մինչեւ անգամ ամենակարեւոր պիտոյքը բերել քեզ հիւանդութեանդ միջոցին:

— Բաւական է, Բուդի: Ինձ այլ եւս շատ բան չէ հարկաւոր, իսկ դու միշտ բարի զուակ էիր, եւ Աստուած կօրհնէ քեզ սորա համար:

— Մայրիկ, մի՞թէ դու առողջանալու չես:

— Ոչ, Բուդի: Բայց մի՛ լար այդպէս: Ես իմ Փրկչիս մօտ եմ գնում եւ կազօթեմ ձեզ համար:

Ուրախութեամբ եւ հաւատով գնումեմ նորա մօտ, իսկ մահը մի վայրկեան է միայն: Բուդի, հաւատա, որ դու դեռ լաւ օրեր կտեսնես:

Բուդին չէր կարողանում խօսել արտասուքներից:

— Բուդի, հոգուս վերադարձեալ մի բան կայ: Երէկ փոքրիկ Բուդէլին, իմ մահճակալիս ետեւը պահված, գեանախնձոր էր ուտում եւ քոյրերին եւս տալիս: Բուդի, հաւատացած եմ, որ այն գեանախնձորը նա դողացած պիտի լինի: Տէր Աստուած, մի՞թէ իմ սիրուն տղաս գոյ է լինելու: Կանչիր նորան մօտս, Բուդի. կամենումեմ նորա հետ խօսիլ:

Բուդին երեսային բերեց եւ նստեցրեց մեծ մօր մահճակալի վերա: Հիւանդը դժուարութեամբ բարձրացաւ աեղից, բռնեց Բուդէլի ձեռքը եւ նորից ընկաւ անկողնի վերա:

— Քեզ ի՞նչ եղաւ. մամիկս: Դու չես մեռնի, այնպէս չէ՞, մամս:

— Շուտով կմեռնիմ, սիրելիս:

— Ուրեմն ես եւս քեզ հետ կմեռնիմ:

— Ոչ, աղանեակս, դու դեռ Աստուծու ողորմութեամբ շատ կապրիս եւ նոյնպէս ազնիւ եւ բարի մարդ կլինիս, ինչպէս հայրդ է: Արդեօ՞ք խօսք ես տալիս ինձ:

— Այո, մամս:

— Բուդէլի, ես այժմ Աստուծու մօտ եմ գնում, նա ամեն բան տեսնում է եւ ամեն բան գիտէ: Դու այս հաւատումես արդեօ՞ք:

— Այո, մամս:

— Ուրեմն ինչպէս էր, որ երէկ դու գողա-

ցած գետնախնձոր էիր ուտում:

— Ներիր ինձ, մամ, ես չափազանց քաղցած էի, արտասուելով ասաց երեխան:

— Դու այն գողացել էիր:

— Այո, մամ:

— Ո՞ր տեղից:

— Որմնագիր Լինհարդի մօտից, հեծկտալով ասաց Բուդէլլին:

— Պէտք է գնաս նորա մօտ եւ թողութիւն խնդրես:

— Մամս, խնդրումեմ, ես չեմ կարող:

— Որպէս զի դու միւս անգամ չանես, պէտքէ գնաս... պէտք է գնաս առանց ընդդէմ խօսելու: Եւ ի սէր Աստուծու, սիրելիս որքան որ քաղցած լինիս, երբէք գողութիւն չանես, ուրիշի բանը չվերցնես: Աստուած անտէր չէ թողնում աղքատներին, եթէ նոքա ազնիւ են: Միտքդ պահիր այս եւ երբէք գողութիւն մի՛ աներ:

— Մամս, չեմ գողանայ, որքան որ քաղցած լինիմ: Երբէք չեմ գողանայ:

— Ուրեմն թող Աստուած օրհնէ քեզ, սիրելիս ես հաւատումեմ քեզ եւ կաղօթեմ քեզ համար: Բուդի, գնա սորա հետ, թողութիւն խնդրիր Լինհարդից իմ անունով, ասա, որ մենք այժմ չենք կարող նոցա գետնախնձորը դարձնել, բայց թէ դու յետոյ կվերադարձնես: Այնպէս չէ՞, Բուդի: Նոքա եւս աղքատ մարդիկ են:

— Կաւ, մամիկ:

Այն րոպէին Հուսմէլ լուսամուտը ծեծեց:

Հիւանդը լսելով նորա ձայնը վախեցաւ:

— Մի՛ նեղանար, մայրիկ, ես այս րոպէիս կվերադառնամ, ասաց Բուդին, սենեակից դուրս գնալով:

Այն միջոցին Հիւանդը հազիւ լսելի ձայնով հառաչելով ասաց:

— Այն անբաղդ դէպքից յետոյ ես չեմ կարողանում անվրդով լսել նորա ձայնը: Տէր Աստուած, մահից առաջ եւս նորա ձայնը վրդովումէ ինձ...: գուցէ, ով Աստուած, նա դիտմամբ ուղարկված է այս տեղ, որ նորա հետ եւս հաշտվիմ սրտումս եւ աղօթեմ նորա համար...:

— Աստուած, ներիր նորան, ինչպէս ես ներումեմ... Այդ միջոցին Հուսմէլ ձայնը բարձրացրեց, եւ հիւանդն ուշաթափ եղաւ:

Բուդէլլի վախեցած դուրս վազեց խրճից եւ կանչեց հօրը:

— Շատ հարկաւոր է, թող պառու դեւը միայնակ մեռնէ, մրմնջեց Հուսմէլ Բուդիի ետեւից, բայց Բուդին չլսեց նորա խօսքերը: Հիւանդը շուտով նորից սթափվեցաւ, եւ երբ Բուդին պատմեց նորան, թէ նա գործ պիտի ստանայ, նա շատ ուրախացաւ եւ ասաց. գոհանամ քեզանից, Աստուած, այս ուրախութեան համար դեռ այս երկրի վերա, — այժմ հանգիստ կմեռնեմ:

Նորա ուժերն արագութեամբ նուազում էին, նա զգումէր, որ երկար ապրելու չէ, եւ պատուիրեց Բուդիին իր մօտ բերել բոլոր մանուկներին: Նա օրհնեց, հրաժարական ողջոյն տուեց նոցա եւ ասաց Բուդիին:

— Կրթիր զաւակներդ մէջ ջանասիրութեան,

աշխատութեան եւ համբերութեան սէր: Սովորեցրու նոցա հաւատալ երկնային Հօրը եւ սիրել նորան: Նա անինամ չէ թողնում իրան հաւատացողներին: Սովորեցրու նոցա սիրել իրանց ընկերներին եւ միմեանց օգնել: Ներքի Հովանի, եւ երբ ես մեռնիմ, զնա նորա մօտ եւ ասա, որ ես ներեցի նորան եւ աղօթեցի նորա համար: Իսկ քեզ համար, որդեակս, կաղօթեմ Աստուծուն. Նա քեզ բարեբաղդութիւն կպարգեւէ: Դու միշտ բարի զուակ ես եղել եւ իմ ամբողջ կեանքիս մխիթարութիւն: Նմանեցէք ձեր հօրը, երեսխաներ, եւ եղէք նորա համար այն, ինչ որ նա էր ինձ համար:

Յետոյ վերցրեց իր երկու Աստուածաշունչ եւ Բուդիին պատուիրեց, որ երկու աւագ թռուներին տայ, իսկ երկու աղօթագիրքը — կրտսերներին, իբրեւ յիշատակ, երբ նոքա կմեծանան:

— Իսկ քեզ տալու ինձ բան չմնաց, որդեակիմ, բայց դու առանց ընծայի եւս չես մոռանայ ինձ: Բուդին արտասուելով ծունկ չոքեց:

Փոքր ինչ լռելուց յետոյ, հիւանդը տան վերաբերմամբ դարձեալ քանի մի կարգադրութիւններ արեց, յիշեց բոլոր գործերը, ամեն բան ինչ որ հարկաւոր էր մանուկներին, եւ վերջապէս ասաց:

— Այժմ զնա Լինհարդի մօտ Բուդիյի հետ եւ նոքա գնացին:

Գէրարուդը միայնակ էր տանը: Բուդին պատմեց նորան ինչպէս երախան նոցա զեանախնձոր է գողացել, եւ աւելացրեց. ներքի նորան, Գէրարուդ:

ուդ: Նա սաստիկ քաղցից ստիպված արել է այս: Անկասկած նա այլ եւս այդպիսի բան չէ անի: Մայրս եւս խնդրումէ, որ ներես մեզ: Խեղճ մայրս այլ եւս երկար ապրելու չէ: Եւ ես ուրախ կլինիմ, եթէ Լինհարդ զեանախնձորի փողը իմ ոտձկից հանէր, կամ թէ չէ, մի ուրիշ բան կկատարեմ ձեզ համար:

— Ի՛նչ ես ասում, Բուդի պատասխանեց Գէրարուդ. Լինհարդ ի հարկէ երբեք այդպիսի բան չէ անի: Փառք Աստուծուն, այսուհետեւ մենք եւս հեշտութեամբ կապրինք:

Իսկ փոքրիկ Բուդիյիին նա իր ծնկին նստեցրեց եւ ասաց. տես, երբեք ուրիշի բանը չվերցնես: Դու դեռ չգիտես, թէ ինչպէս անբաղդ են լինում գողերը:

— Ներեր ինձ, խնդրումեմ:

— Բոլոր սրտով ներումեմ, եւ երբ դու համբերելու ոյժ չունենաս, եկ եւ ասա ինձ — ես մի բան կտամ միշտ քեզ, եթէ ինքս ունենամ:

Յետոյ նա երախային չորացած միրգ տուեց, եւ զնաց Բուդիի հետ նոցա տուն եւ ճանապարհին օգնումէր նորան հիւանդի համար չոր տերեւներ ժողովելու:

Հիւանդն իր վերջին շնչումն էր: Գէրարուդին նա ճանաչեց, — կրկին ներողութիւն խնդրեց, խնդրեց նոյնպէս, որ խնամք տանէ, որքան հընարաւոր կլինի, մանուկների մասին, — որովհետեւ բոլորովին միայնակ են մնում, — եւ խաղաղ հոգին աւանդեց:

Ը.

Այս միջոցին Հումմէլ ման եկաւ այն բոլոր գիւղացիների տները, որոնք նշանակված էին օրավարձով բանելու. եւ հրամայեց նոցա, որ միւս օր առաւօտեան ամրոց գնան պարոնին շնորհակալութիւն յայտնելու: Յետոյ նա Միքէլի հետ խօսեց: Միքէլը խոստացաւ նորան, որ ամեն կերպով կ'փնտսէ Լինհարդին. նախ պետք է գրաւէր նորա վտահաւթիւնը, յետոյ մշակներին միմեանց հետ կ'ուսեցնէր, գանազան գործիքներ թագցնէր, գիշերով քանդէր նոյն իսկ շինած գործը եւ վերջապէս գողանար բոլոր նախագծերը, հաշիւները եւ այլն: Նոքա յոյս ունէին, որ այսպէսով Լինհարդը պարոնի վտահաւթիւնը կ'կորցնէ եւ Արնէրն այլ եւս ցանկութիւն չէ ունենայ գիւղացիների հետ անձամբ գործ ունենալու: Այս ամենի համար տանուաէրը Միքէլին երկու դուլքէն գրաւական տուեց եւ խոստացաւ գետ աւելի տալու:

Հումմէլ այժմ գարձեալ հանգստացաւ:

Երբ նա վերադարձաւ տուն, տեսաւ որ իր պանդոկը լի էր ժողովուրդով, եւ իր կինն հազիւ կարօզանուժէր գինի հասցնել:

Հումմէլ միացաւ գիւղացիների խմբին եւ մինչեւ գիշեր նոցա հետ արբեցութիւն էր անում:

Ամենքն արդէն պատրաստովուժէին իրանց տները ցրուել, երբ Յովսէփը մտաւ Հումմէլին մի կողմ ձայն տալով, նա պատմեց թէ Լինհարդին հա-

մեղել էր, որ շինութեան համար աւազաքար վերցրնէ, եւ թէ երկուշաբթի գործը սկսելու են, եւ շատ խնդրեց, որ կանխիկ 3 Գուլքէն փողը տայ իրան: Հումմէլ երկար ժամանակ չէր համաձայնում, բայց Յովսէփն այնքան թախանձուժէր եւ երդումով թէ ամեն բան կ'կատարէ, ինչպէս որ պայման էին դրել, որ վերջապէս Հումմէլ համաձայնեց եւ տուեց: Յովսէփը ձեռաց մի բաժակ գինի խմեց եւ գնաց: Յովսէփը փողոցում իր փողը հաշուելով ասաց. դէ՛հ այժմ ես հանգիստ եմ: Փողը իմ ձեռքիս է, եւ Լինհարդ թող իր կամեցածն անէ, — ես այլ եւս գործ չունիմ այս հին աւազակ Հումմէլի հետ:

Թ.

Նոյն շաբաթ երեկոյեան, երբ Հումմէլի այցելուները խնջոյք ունէին եւ աղմուկ էին հանում Հումմէլի մօտ, Գէրարուդ հանգիստ ժամանակ էր անցուցանում ասնը իր վաւակների հետ:

Նա հանել էր իր մարդու, մանուկների եւ իրան համար միւս ասն օրն հագնելու շորեր, եւ բոլոր գործերը վերջացրած, ժողովեց մանուկներին աղօթելու:

Շաբաթ օրերը նա միշտ գրոյց էր անում մանուկների հետ նոյն շաբաթվան մէջ պատահած ամեն լաւ կամ վատ անցքերի մասին: Իսկ այսօր նորա սիրտն առանձնապէս լցված էր երախտագիտութեամբ առ Արարիչն իրանց շնորհած օգնութեան համար:

— Այս շարաթ Աստուած մեծ ուրախութիւն պարգեւեց, ասաց մանուկներին. ձեր հայրը պարոնից լաւ գործ ստացաւ: Այժմ, սիրելի զաւակներս, Աստուծու սպասութեամբ մենք շատ հաց կուենեանք: Շատ անգամ սիրտս այրվումէր, որ չէի կարողանում ձեզ մի կուշտ կերակրել: Բայց, սիրելիներս, այն օրերը չմոռանաք, յիշեցէք, որ Աստուած փորձութիւններ է ուղարկում մեզ համբերութիւն եւ հեզութիւն սովորեցնելու համար, որպէսզի մենք, իմանալով թէ ի՛նչ է ազբատութիւնը, ազբատներին օգնենք: Արդարեւ մի՞թէ դուք եւս յօժարութեամբ բաժին չէք տայ երբեմն ազբատ մանուկներին:

— Այո, մայրիկ, եթէ հնարաւոր է նոյն իսկ վաղիւ եւեթ, ասաց Նիկլաս:

— Լաւ, սիրելիս: Հապա մտածեցէք, թէ ում կկամենայիք բաժին տալ, — եւ վաղիւ կարողէք այդ անել:

— Մանուկները շտապով իրանց առաւել ազբատ քանի մի ընկերների անուներ տուն:

— Լաւ, ասաց մայրը, բայց մի՛ մոռանաք, որ մենք սորա համար պիտի երախտապարտ լինինք Արնէրին, — ուրեմն աշխատեցէք նորա սէրը գրաւել:

— Իսկ դու ցոյց կուտա՞ս մեզ այն փողերը, որ նա ուղարկել է մեզ համար:

— Այո, բայց միայն յետոյ: Իսկ այժմ ասա ինձ, Աննէլի, ի՛նչպէս էիր վարվում արգեօ՞ք այս շարաթ:

— Ոհ, մայրիկ, դու գիտես... Փոքրիկ եղբորս հետ...:

— Այո, սիրելիս, եւ փառք Աստուծուն, որ երեխայի հետ ոչինչ չպատահեց: Փոքրիկ երեխաներին չէ կարելի միայնակ թողնել:

Նոքա վախենում են եւ գոչում են այն աստիճան, որ կարող են վնասվել: Հապա մտածիր, ի՛նչ կանէիր դու, եթէ քեզ միայնակ փակէին մի սենեակում, այն եւս քաղցած:

— Ներիր ինձ, մայրիկ:

— Այս անգամ ներումեմ, բայց միտքդ պահիր, որ ես չեմ կարող մի րոպէով եւս հանգիստ սրտով անից հեռանալ, եթէ հաւատացած չլինիմ, թէ դուք փոքրիկին կպահէք:

— Հաւատա ինձ, մայրիկ, որ այս այլ եւս չէ կրկնվի:

— Իսկ դու, Նիկլաս, ի՞նչ ունիս ասելու:

— Կարծեմ ոչինչ, մայրիկ:

— Բայց մտաբերումե՞ս Գրիտէլի դէպքը:

— Բայց չէ՞ որ իմ արածս անգիտութեամբ էր:

— Այդ էր պակաս, որ դիտամբ անէիր: Ամօթ է, Նիկլաս:

— Այլ եւս չեմ անի, մայրիկ:

— Տես ուրեմն, որ այս չկրկնվի, — այսպիսի անզուգուծութեանից հեշտ կարելի է վնաս հասցնել թէ քեզ եւ թէ ուրիշներին:

— Իսկ դո՞ւ, Լիզելի:

— Կարծեմ, ես լաւ էի վարվում:

— Մի լաւ մտածիր:

— Իրաւ, ես ոչինչ չեմ կարողանում մտաբերել:

— Մի՞թէ չես յիշում, Լիզելի. թէ քանի անգամ քեզ ասված է, որ չխօսիս ինչ որ քեզ չէ վե-

րարերվում: Սակայն դու նոյն ժամայն հազոր-
դեցիր Հումմէլին, որ մենք գիտենք Արնէրի գիւղ
գալու մասին: Հապա եթէ այդ վիասէր հայրի-
կին:

— Բայց, մայրիկ, ոչ դու, ոչ հայրիկը չէք ա-
ռած թէ այս մասին պէտք է լուել:

— Ահա նոր բան: Երբ հայրիկը տուն կգայ,
ես կասեմ նորան, որ ամեն մի բանին, ինչ որ
խօսվում է մեր մէջ տանը, պիտի աւելացնենք.
այս ինչ բան կիզէին կարող է պատմել դրացին-
ներին, իսկ այս ինչ բան չէ կարող, այս ինչ
դարձեալ կարող է: Այն ժամանակ դու լաւ կի-
մանաս թէ ինչ կարող ես պատմել:

— Ներիր ինձ, մայրիկ, ես այդ չմտածեցի:

— Կիզէլի, քեզ այս մասին շատ անգամ ասված
է, բայց դու չես կամենում լրջօրէն մտածել եւ
ուղղվել: Ուստի, միւտանգամ երբ այս կիրկնվի,
ես քեզ ձողկածեծով կպատժեմ: Երեւում է այ-
լապէս չէ կարելի քեզ սովորութենիցդ յետ
կանգնեցնել:

Կիզէլի աչքերից արասաւ քներ թափվեցան:
Գէրարուզն այս տեսաւ եւ ասաց:

Այսպիսի շատախօսութենից ամենամեծ դժ-
բաղդութիւններ են պատահում կիզէլի, եւ դու
պիտի թողնես այս սովորութիւնը:

Այսպէս խօսեց Գէրարուզը բոլոր մանուկների
հետ, եւ յետոյ սկսեց նոցա հետ աղօթել: Երե-
կոյեան սովորական աղօթքն ասելուց յետոյ, նա
կրկին գոհութիւն տուեց Աստուծուն նորա շնոր-
հած ողորմութեան համար եւ խնդրեց նորանից,

որ օգնէ իր մանուկներին ուղղելու իրանց պա-
կտութիւնները, եւ ազնիւ ու բաբի մարդիկ
դառնալու: Երբ աղօթքը վերջացաւ, կիզէլին ա-
սաց. այժմ ցոյց տուր մեզ փողերը, մայրիկ:

— Լաւ, պատասխանեց Գէրարուզ, բայց այն
րոպէին Նիկլաս վեր թռաւ իր տեղից, վազեց
դէպի սեղանը լոյսի մօտ եւ նոյն միջոցին այն-
պէս դիպաւ իր փոքր քոյրիկին, որ նա սկսեց
լալ:

— Այս լաւ չէ, Նիկլաս: Դու նորահախօսա-
ցար, որ աւելի զգուշութեամբ կվարվիս, բայց
դարձեալ միեւնոյն ես անում:

— Մայրիկ, ներիր ինձ, ես այլ եւս երբէք չեմ
անի:

— Դու նոր միեւնոյն էիր ասում, եւ եթէ
ես քեզ չպատժեմ, դու կրկին կմոռանաս: Ես ինքս
շատ ցաւում եմ, սիրելիս, բայց ինչ անեմ, ուրիշ
հնար չկայ. դու այսօր առանց ընթրիքի կմնաս
եւ այս րոպէիս կգնաս քնելու: Այս ասելով նա
դուրս տարաւ Նիկլասին սենեակից: Բոլոր մա-
նուկները հանդարտվեցան եւ տխուր կանգնած
էին սեղանի մօտ:

— Ներիր նորան, մայրիկ, ասացին նոքա, երբ
մայրը վերադարձաւ:

— Ոչ, նա պիտի չմոռանայ ինչ որ խօստա-
նում է: Ահ, երեխաներ, ի՛նչի չէ կարելի ձեզ մի-
այն քաղցրութեամբ կրթել:

— Ուրեմն աւելի լաւ է մենք չենք տեսնի փող-
երն այսօր, այլ վաղիւ, եւ նա եւս կը տեսնէ
մեզ հետ, ասաց էննէն:

— Ահա այդ լաւ է, էննէ, վաղիւ նա եւս ձեզ
հետ կտեսնէ: Այս ասելով Գէրարուդն ընթրիք
նոցա տուեց, եւ յետոյ ննջարան տարաւ:

Նիկլաս շարունակումէր լալ:

Երբ Գէրարուդ ներս մտաւ, նա պինդ դրկա-
խառնեց նորան եւ ասաց. մայրիկ, խնդրումեմ
ներիր ինձ եւ համբարիր: Ես յօժարութեամբ
առանց ընթրիքի կմնամ, միայն թէ ներիր ինձ:

Գէրարուդ ջերմ համբարեց նորան, օրհնեց
բոլոր մանուկներին եւ դուրս գնաց սենեակից:

Այժմ նա միայնակ էր, եւ գոչութեան ջերմ
զգացմունքով առ Աստուած լցված էր նորա սիր-
աբ: Նա չօքեց եւ արտասուելով աղօթեց:

Շուտով Աինհարդն եւս եկաւ իր աշխատանքից:

Գէրարուդ պատմեց նորան բոլորն, ինչ որ
պատահել էր նոյն օր, եւ նոքա երկուքեան որո-
շեցին իրանց ընթրիքը Բուդիին տանելու:

Խեղճ Բուդին նստած էր իր վստածանած մօր
անկողնի մօտ, իսկ փոքրիկ Բուդէլի չէր կարօ-
ղանում քնել քաղցածութենից եւ աղիողորմ ձայ-
նով հաց էր խնդրում: Նոքա արտասուելով շոր-
հակալ եզան Աինհարդից եւ Գէրարուդից ընթ-
րիքի համար, փոքր ինչ կերան իրանք, եւ մնա-
ցածը պահեցին միւս երեխաների համար, որոնք
այժմ քնած էին:

ժ.

Միւս օրը տօն էր: Աինհարդ եւ Գէրարուդ,
իրանց լաւագոյն շորերն հագած, եկեղեցի գնա-

ցին: Հումմէլն եւս գնացել էր եկեղեցի: Քահա-
նան քարոզ ասաց, եւ նորա խօսքերն ուղղակի
ունկնդիրներ ի սրտերն էին թափանցում: Նա
խօսում էր թէ մարդիկ ինչպէս պիտի աշխատին
եւ միմեանց օգնեն, թէ որքան տխուր է նոցա
վիճակը, որոնք ճնշումեն իրանց մերձաւորներին
եւ նոցա հաշուով ապրում:

Հումմէլին թուում էր թէ քահանան իր իրա-
քանչիւր խօսքով նորան էր ակնարկում եւ հեռ-
ըզհետէ աւելի էր զայրանում:

Երբ ժամասացութիւնը վերջացաւ, Հումմէլ
գնաց տուն եւ իր մօտ քանի մի արբեցօղներին
կանչելով, սկսեց խմել նոցա հետ եւ հայհոյել
ամենքին աշխարհիս մէջ: Այս բանը պատմեցին
քահանային, եւ երբ երկու ժամին ժամասացու-
թիւնը նորից սկսվեցաւ, իսկ տանուտերի տանը
ազմուկը աւելի էր սաստկացել, նա այնպէս խօ-
սեց այն մարդիկներ ի մասին, որոնք եկեղեցուց
ուղղակի գնումեն խմելու եւ խաղալու, որ ամեն-
քըն հասկացան թէ ումն էր ակնարկում: Հում-
մէլի կինը հազիւ հազ մնաց մինչեւ ժամասացու-
թեան վերջը, չտալով գնաց տուն, եւ ամեն բան
պատմելով իր ամուսնին, համոզեց նորան շուտ
իր այցելուներին ճանապարհ դնել: Հումմէլ չա-
փագանց վրդովված այս բանով, լսեց իր կնոջը,
բայց սիրտը լի էր չարութեամբ:

Ի զուր էր համոզում Հումմէլին կինը, որ թող-
նէ, քանի դեռ կարելի էր, այս իր կեանքը: Բայց
նա թէպէտ եւ հասկանում էր, որ կինը ճշմարիտ
էր ասում, բայց չէր կարողանում իրան զուգել,

եւ հետզհետէ աւելի էր խմում եւ Լինհարզի ,
քահանայի եւ Արնէրի դէմ զայրանում :

ԺԱ.

Մինչդեռ Լինհարզ եւ Գէրարուզ եկեղեցու մի
էին, մանուկներն տանն էին միայնակ, եւ մեծե-
րը փոքրերին էին պահում :

Լիզէլին օրօրում էր եւ կերակրում էր մանկի-
կին, եւ կարծում էր թէ արդէն մեծ կին է եւ
աշխատում էր ամեն բան այնպէս անել, ինչպէս
իր մայրը : Նիկլասն եւս իր կողմից աշխատում էր
փոքրիկներին զբաղեցնել :

Երբ ծնօղները սուն վերադարձան, տանն ամեն
բան կարգին էր եւ երեխաներն ուրախ : Ծնօղ-
ները խօսում էին, փայփայում էին նոցա, եւ ե-
րեխաներն, ինչպէս ամեն կիրակի օրեր, պատ-
մում էին բոլորն, ինչ որ սովորել էին այս շա-
բաթում : Յետոյ Գէրարուզ նոցա կաթ եւ հաց
սուեց : Կաթը նոքա խմեցին, իսկ հացը պահե-
ցին, որ իւրաքանչիւրը տան էր իր աղքատ ընկե-
րին տար : Նիկլաս իր բաժինը կամենում էր տա-
նել Բուգէլիին, Լիզէլին — իր ընկերուհի Բէտ-
էլիին, որ խիստ եւ չար Մարկսի աղջիկ էր, իսկ
փոքրիկ Յովհան — Միքէլի որդի Բարէլիին :

— Բայց չմոռանաք, որ դուք ձեր օգնութիւն
այնպէս պիտի տաք, որ ոչ ոք չտեսնէ, ասաց
մայրը :

Նիկլաս վաղելով դնաց դէպի Բուգի, Բուգիին
ծածուկ դուրս կանչեց, շտապով սուեց նորան

իր հացը եւ նոյնպէս շտապով յետ դարձաւ, ա-
ռանց նորա շնորհակալութիւնները լսելու :

Լիզէլին հանդարտ գնում էր փողոցով եւ եր-
կար պըտտում էր Մարկսի տան մօտ : Նա այնքան
սպասեց մինչեւ որ վերջապէս Բէտէլին գլուխը
լուսամտից դուրս հանեց : Դուրս կանչեց նորան
եւ երկաքեան մի կոյտի վերա նստած, սկսեցին
խօսել, առանց կասկածելու, որ Բէտէլիի հայրը
նոցա ամեն մի խօսքը լսում է : Լիզէլին հարց-
նում էր Բէտէլիից թէ նոքա կարօտութիւն քա-
չում են արդե՞օք, ի՞նչ ունէին ճաշին եւայլն :

Բէտէլին երկար չէր կամենում բան ասել, վերջը
գրպանից մի կտոր հում շաղգամ հանեց եւ լուռ
ցոյց տուեց Լիզէլիին :

— Տէր Աստուած, մի՞թէ ուրիշ ոչինչ չունէիք :

— Ոչինչ :

— Առ այս հացը, կեր շուտով :

Բէտէլին սկսել էր հացն ուտել, նոյն միջոցին
նորա հայրը բացեց դուռը եւ ասաց .

— Ի՞նչ ես ուտում, աղջիկս :

— Ես... ոչինչ... կակաղելով ասաց աղջիկը :

— Ի՞նչպէս թէ ոչինչ : Չէ որ ձեռիդ հաց կայ :
Գնանք հապա տուն, գառնուկս, քեզ այնտեղ
ցոյց կտամ : Իսկ դու Լիզէլի, միաքիչ պահիր, որ
ես չեմ սիրում, երբ իմ երեխաներիս գողանի
բան են բերում եւ նոցա հարց ու փորձ անում
թէ ինչ են ուտում տանը եւ նոցա բարբանջ-
մունքը լսում :

Լիզէլին վաղելով սուն դնաց, բայց երկար ժա-
մանակ լսում էր խեղճ Բէտէլիի ճիշն ու աղաղակը :

Յովհանն այնքան սպասեց Միքէլի խորճիթի մօտ , մինչեւ որ Բարէլին դուրս եկաւ փողոց , Յովհանը համոզեց նորան , որ նա աչքերը խփէ , դրեց հացը նորան ձեռին եւ փախաւ :

Բարէլին բացեց աչքերը , տեսաւ իր ձեռին հացը եւ ասաց , ահա լաւ բան , — նստեց եւ սկսեց ուտել :

Նորա հայր Միքէլը տեսաւ այս եւ սիրտը չարժվեցաւ , նա զգաց թէ ո՛րքան վատ էր վարվում այն մարդու հետ , որի որդին իր հացի կտորից բաժին էր բերում իր որդուն :

Լինհարգի բոլոր երեխաները ուրախ ուրախ վերադարձան տուն բացի Լիզէլիից , որը հանգիստ չէր երեւում , եւ մայրը այս նկատեց :

ԺԲ.

Միւս օրն Արնէր Հուճիկին հրամայեց , որ իր մօտ գայ եւ նորան վճռողաբար յայտնեց , որ երկուսից մին ընարէ . կամ տանուտէրի պաշտօնը կամ պանդոկ պահելը :

Հումմէլ աղչած մնաց : Նա կարծեւէ թէ Արնէր միայն սպառնում է նորան : Արնէր նորան երկու շարաթ ժամանակ տուեց մտածելու եւ դուրս գնաց :

Տանուտէրը գնաց տուն , բայց ճանապարհին կանգ առաւ եւ հետն առած մի շիշ օղի դատարկեց : Նա սիրան առաւ եւ վճռեց ուրիշներին ցոյց չտալ թէ վշտացած է , բայց իր սրտում եւս առաւել զայրանում էր : Միեւնոյն ժամանակ նա

այն օրն իմացաւ , թէ Յովսէփը խարել է նորան . Լինհարգ շինութեան համար լաւ քար էր առնում :

Որքան աւելի լաւ կը լինէր նորա համար , եթէ նա վերադառնար Արնէրի մօտ եւ իր գործերը պարզ յայտնէր նորան , որ ինքն ամենեւին հարուստ մարդ չէ , այլ ընդհակառակն բոլորովին պարտքի մէջ է , թէ նորան կարեւոր են երկոքեան պարապմունքն եւս , որպէս զի մուրացկան չդառնայ :

Բարեսիրտ Արնէրն երեւի կօգնէր նորան : Բայց Հումմէլն այս չարեց : Ընդհակառակն , նորա սիրտը վրէժխնդրութեան ծարաւով լցվեցաւ , եւ նորա մտքում մի օրհասական նախազիծ ծնվեցաւ :

Ահա թէ ինչ . Արնէրի կալուածի սահմանը որոշուած էր մեծ քարերով , Այս կալուածի մի անկիւն խոր տարածվում էր մի կողմ , եւ տանուտէրի խորհուրդն այն էր , որ այն սահմանանիշ քարը փորէ հանէ եւ գլորէր ստրից այն ժամանակ Արնէրին դժուար կլինէր ապացուցանել թէ այն բոլոր անկիւնն իր հօղն է , եւ նա կարօղ էր զրկվել իր նշանաւոր կտոր հողից :

Հումմէլ աշխատում էր հեռացնել իրանից այս միտքը , բայց հետզհետէ այն միտքն աւելի էր տիրանում նորան : Մի բան միայն վախեցնում էր նորան — գիշերով միայնակ անտառի խորերը գնալ հեռու , նա վախենում էր ուրուականներին — դեւերին :

Երբ Հումմէլ տուն վերադարձաւ իմացաւ , որ արգէն ամբողջ գիւղն Արնէրի տնօրէնութիւնն իմացել էր : Նորա կինը դառնապէս լալիս էր , իսկ ինքն մինչեւ երեկոյ կատաղի էր :

Լինհարդն այն օր սկսել էր իր օգնականներով իր գործը: Թէպէտ ինքն գլխաւոր վարպետ էր, բայց ուրիշների հետ միասին բանումէր եւ օգնումէր ամենքին թէ գործով եւ թէ խօսքով, եւ միշտ ամենադժուար տեղերում ինքն էր աշխատում: Նորա այս վարմունքը շատ լաւ ազդեցութիւն ունեցաւ մշակների վերա. նոքա սկսեցին աւելի սէրով եւ եռանդով աշխատել, բայց ամենքից աւելի այս հանգամանքը Միքէլի վերաներգործեց:

Որքան աւելի էր տեսնում նա Լինհարդին, այնքան աւելի անբաւական էր լինում իրանից, եւ վերջապէս վճռեց ամեն բան նորան խոստովանել:

Երեկոյեան Լինհարդի ետեւից նորա տունը գնաց եւ նորան պատմեց Հոււմէլի հետ կապած խաբէբայական պայմանադրութիւնը եւ ցոյց տուեց նորանից կանխիկ ստացած փողը:

Լինհարդ սարսափեց եւ երկիւղի մէջ ընկաւ, բայց ջերմ գոհութիւն տուեց Աստուծուն, որ նա իրան այսպիսի թշնամուց ազատել էր:

Այնուհետեւ Միքէլը մինչեւ անգամ առաջարկեց այժմ Հոււմէլի գէմնի գործել, բայց Գէրարուդը բոլորովին վրէժխնդրութեան դէմ էր եւ Միքէլին խորհուրդ տուեց, որ տանուտէրին ստացած առհաւատչեան վերադարձնէ եւ ասէ, որ այսուհետեւ այլ եւս օգնելու չէ նորան:

Թէպէտ արդէն ուշ էր, բայց Միքէլը նոյն երեկոյեան եւ եթ այնպէս արեց:

ԺԳ.

Միքէլի մերժումը բոլորովին կատաղեցրեց Հոււմէլին: Նա երկար չըջումէր սենեակի մէջ, շարունակ օդի խմելով եւ հայնոյտնքներ թափելով Արնէրի, Լինհարդի եւ քահանայի վերա: Վերջը նա իւր կնոջը պատուիրեց պատրաստել մի շիշ օդի, վերցրեց բահն ու բրիչը եւ շնայելով կնոջ աղաչանքին, գնաց սահմանանիշ քարը հանելու: Այն տեղն հասնելով, վայր դրեց դործիքներ եւ փորել սկսեց: Սկզբում բանն յաջող էր գնում, բայց յանկարծ մի շաչիւն լսեց. Յետ նայեց եւ տեսաւ իր առաջ մի բարձր, սեւ պատկեր կրակոտ աչքերով: Նորան թուեցաւ թէ դեւ էր նա, եւ սարսափելի աղաղակներով սկսեց վազել սարից դէպի վայր, օգնութիւն կանչելով:

Բայց նա թռչնապանն էր, որ Արնհայմ էր վերադառնում: Նա գլխին դրած ունէր սեւաւ մորթով ծածկված մի կողով, եւ որովհետեւ մութ գիշեր էր, վառել էր լապտերը եւ կախ էր տուել կողովից: Հասկանալով, որ Հոււմէլ մի չար գործի վերայ պիտի լինէր այստեղ, կամեցաւ նորան այնպէս վախեցնել, որ նա իր ամբողջ կեանքում յիշէր: Թռչնապանը շտապով վայր դրեց կողովը, Հոււմէլի բահն ու բրիչը կապեց մէջքիցը այնպէս, որ գետնին էին քսվում եւ սկսեց տանուտէրի ետեւից վազել զարհուրելի ձայնով գոչելով:

— Կանգնիր, Հոււմէլ, կանգնիր, դու իմա ես, Հոււմէլ:

Հումմէլ այս ազաղակներին սարսափած, բոլորովին գլուխը կորցրեց երկիւզից եւ ի սէր Աստուծուն օգնութիւն էր խնդրում: Ամբողջ գիւղը դարդեց: Ամէնքը լսեցին անմարդանման ազաղակներ եւ զարհուրելի աղմուկը, կարծես թէ սարից սրընթաց մի ամբողջ հօտ էր իջնում: Մարդիկ Հումմէլի տունը գնացին եւ տեսնելով, որ նա տանը չէ, վճռեցին գնալ օգնելու, ոմն լապտեր, ոմն Աստուածաշունչ առած եւ ոմնք ազօթքներ ասելով: Ամենից առաջ տանուտէրի խեղճ կինն էր վազում:

Երբ թռչնապտնը տեսաւ, որ ժողովուրդը մօտենումէ, շտապով վերադարձաւ սարը, վայր դրեց բաճն ու բրիչը եւ հանդարտ իր ճանապարհը շարունակեց:

Ժողովուրդն Հումմէլին վախից կիսամեռ եղած գտաւ: Նա ուշքի եկաւ միայն, երբ նորան տուն բերին, բայց նա դարձեալ բոլորովին դողգողում էր եւ ժողովրդին խնդրում, որ գիշերը նորա պանդոկում անցկացնեն. նա կարծումէր թէ դեռ նորից գալու է իրան տանելու:

ԺԴ.

Քահանան նոյնպէս խմացաւ բոլորն, ինչ որ պատահել էր եւ կամեցաւ օգուտ քաղել այս հանգամանքից տանուտէրին զղջալ տալու իր արարքը եւ ստիպելու նորան, որ Բուզից խլած հողը վերադարձնէ իրան: Չնայելով որ ուշ էր, քահանան գնաց Հումմէլի մօտ: Խեղճը ամենա-

թշուառ դրութեան մէջ էր եւ շարունակումէր պնդել թէ իր տեսածը դեռ էր եւ հազիւ հազ փախչել էր նորանից: Իզուր էր ասում քահանան նորան թէ այս անցքը կարող է հասարակ կերպով պարզվել: ոչ միայն Հումմէլ, այլ միւս գիւղացիներն եւս բոլորովին հաւատացած էին թէ նա արդարեւ դեռ է եղել:

Հումմէլն արտասուելով աղաչումէր քահանային, որ իրան սովորեցնէ թէ ի՛նչ պիտի անէր, որ դեռ ձեռից ազատվէր, որ Աստուած խնայէր իրան: Քահանան երկար եւ անկեղծ խօսումէր նորա հետ, համոզումէր նորան ուղղվելու, յափշտակած հողերն իրանց տէրերին վերադարձնելու եւ ամեն բան Արնէրին խոստովանելու: Քահանան ասումէր նորան, որ սա միակ միջոց է հոգեկան, անդորրութիւն գտնելու: Վերջապէս, Հումմէլն արտասուելով վճռեց Բուզիին նորա արօտատեղը վերադարձնել, ամեն բան Արնէրին խոստովանել եւ քահանային իրաւունք տուեց այս ամենն առաջագոյն Արնէրին յայտնել եւ խնդրել նորա ներողամտութիւնը:

Քահանան միեւնոյն գիշեր Արնէրին նամակ գրեց, խնդրելով, որ նա ողորմած լինի անբաղդ մեզապարտին եւ մանրամասնարար պատուեց Հումմէլին պատահած ամեն բանը:

Արնէրն արդէն խմացել էր ամեն բան նոյն իսկ թռչնապանից: Քահանայի նամակը ստանալով, նա միւս օրն եւեթ գնաց Բօննալ իր կնոջ եւ կարլոս որդու հետ. Բօննալ եկաւ, իսկ իր անասնազահին պատուիրեց, որ ամենալաւ կովը ընտրէ եւ այնտեղ բերէ:

ժԵ.

Բօննալ գալով, Արնէր իջեւանեց քահանայի մօտ եւ երկար խօսակցումէր նորա հետ այս դիպուածի մասին: Յետոյ նա պատուիրեց իր մօտ կանչել Հումմէլին, մանրամասնօրէն հարց ու փորձ արեց նորան, եւ ստորագրել տալով նորան այն թուղթը, որով նա վերադարձնումէր Բուդիին նորա արօտատեղը, յայտնեց նորան, որ իր դատովճիւրը կկարգայ բոլոր ժողովրդի առաջ:

Այնուհետեւ Արնէր եւ քահանան ցաւ էին յայտնում ժողովրդի սնտիպաշտութեան մասին եւ որոշեցին ապացուցանել ժողովրդին, թէ ո՛րքան սխալվել է այս գէպըում:

Յետոյ Արնէր տանուտէրի թղթերից տեղեկանալով Յովսէփի արարքի մասին, պատուիրեց, որ նորան կապած աշխատութեան տեղից դիւղի հրապարակ տանին: Երբ բոլոր ժողովուրդն հաւաքվեցաւ, Արնէր հրամայեց, որ Հումմէլին եւ Յովսէփին բերեն: Հումմէլ չոքեց եւ Արնէր նորա դատովճիւրը կարգաց. «Նախ նա պիտի նորից սահմանանիչ քարը իր տեղը դնէ: Երկրորդ վաղիւ դահիճը նորան կտանէ կախաղանի մօտ եւ անջնջելի սեաւ մուր կքսէ նորա աջ ձեռի երեք մատին, յետոյ երկու շաբաթ նա պիտի բանտարկված մնայ, ամբողջ իր կեանքը եւ յանցանքները պիտի գրէ քահանայի համար, որ քահանան յետոյ ի լուր ամբողջ ժողովրդի պատմէ այն ամենը:» — Թող սորա վիճակն օրինակ լինի ամենքին ով

ճնշումէ չունեւորներին, աւելացրեց Արնէր:

Իսկ Յովսէփը նորա գիւղին չէր պատկանում, ուստի Արնէր նորան իր կալուածներից արտաքսեց եւ արգիլեց, որ երբէք չվերադառնայ այն գիւղը:

Յետոյ նա դարձաւ գիւղացիներին եւ աշխատեց նոցա համոզել որ Հումմէլն երէկ աշից մարդուն դեւի տեղ էր ընդունել:

Բայց նոքա ոչ միայն չհաւատացին, այլեւ ծիծաղումէին նորա խօսքերի վերա եւ ասում, որ իրանք ամենքը լսել են այն զարհուրելի աղմուկը, որ չէր կարող մի մարդու գործ լինել:

Այնժամանակ Արնէրն ասաց. ես ձեզ կապացուցանեմ, բայց դուք սորա փոխարէն հասարակական հողերը նորից պիտի բաժանէք ձեր մէջ: Այս հողերին հարուստներն էին տիրել եւ շունեւորներին սչինչ չէր մնացել: Արնէր վաղուց արդէն առաջարկումէր հողերը բաժանել, բայց հարուստ գիւղացիները չէին համոծայնում:

Այժմ հարուստներն համաձայնեցին, համոզված լինելով, որ Արնէր չէր կարող ապացուցանել իր ասածը:

Այն միջոցին Արնէր նշան արեց եւ թռչնապանն առաջ եկաւ նոյն ձեռով, ինչպէս երէկ եւ ամեն բան մանրամասնաբար պտտմեց եւ առաջարկեց, որ նա այսօր եւս կրկնէ ինչ որ արելէր երէկ: Գիւղացիներն ահամայ համոզվեցան: Հարուստները քթերը կախեցին, իսկ շունեւորները չառ ուրախացան:

Արնէր քահանայի տուն վերադարձաւ, Բուդիին կանչեց իր մօտ, յայտնեց, որ իր արօտա-

տեղը նորից իրան է վերադառնում եւ ներողութիւն խնդրեց իր պապի տեղ: Բուդիի սիրաբլլցվեցաւ. արտասուքով շնորհակալութիւն յայտնեց պարոնին, եւ խոստացաւ խեղճ Հուսմէլին օգնել, ներել, որը շատ նեղութիւն քաշեց այսօր:

Երեկոյեան Արնէրն առատ ընթրիք ուղարկեց Բուդիին եւ ինքն եւ ինքն եւս իր կնոջ եւ որդու հետ նորա տունը գնաց: Քահանան եւս եկաւ այնտեղ: Նոքա մարդ ուղարկեցին Լինհարդին եւ Գէրարուդին եւս կանչելու եւ ազբատ մարդիկներ չեա ընթրեցին:

Արնէր եւ քահանան այնտեղ իմացան թէ որքան բարիք էին արել Բուդիին եւ նորա զաւակներին Լինհարդ եւ Գէրարուդը, եւ այս բանը շատ շարժեց նոցա սիրաբլլ:

Նոյն երեկոյեան Բուդիի գոմում կապված էր մի գեղեցիկ կով, որին նայելով շէին կշտանում բոլոր դրացիները, իսկ Բուդիին արտասուքով մտաբերում էր իր հանգուցեալ մօր օրհնութիւնը եւ վերջին խօսքերը:

Իրանց արած բարեգործութեամբ մխիթարված Արնէր եւ Թէրէզը (այս էր նորա կնոջ անունը) երեկոյեան Արնհայմ վերադարձան: Ճանապարհին թռչնապանին պատահելով, նորան եւս վարձատրեցին դեւի ձեւով իր մատուցած ծառայութեան համար:

Շուտով սորանից յետոյ գիւղի մէջ լուր տարածվեցաւ թէ Գէրարուդն հարստացած Բուդիի հետ է նշանում իր լաւագոյն ընկերուհուն օրիորդ Մայիէրին, որի երիտասարդ եղբօրն Արնէր այժմ տանուտէր էր նշանակել Հուսմէլի տեղ:

ԺԶ.

Նոյն երեկոյեան Հուսմէլ նորից սահմաննիչ քարի մօտ պիտի գնար: Ժողովուրդը բազմութեամբ ուղեկցում էր նորան աղաները ծառերի վերա էին բարձրանում, աղջիկներ շարքով կանգնած էին ցանկապատի մօտ, եւ ամենքը ծաղրում էին նորան եւ կատակներ անում: Շատ աներից նորա ախանջին անէծքներ եւ ծաղրածութիւններ էին հասնում: Ժողովուրդն արդէն առելութիւնն յայտնելուց չէին վախենում: Միայն մի տանը վախ էին փեղկերն ու դռները—այդ Գէրարուդի տունն էր: Քահանան այս ամենը էր լցվում դէպի Հուսմէլ, սիրաբլլ ցաւակցութեամբ էր լցվում դէպի Հուսմէլ, մանաւանդ որ նա գիտէր թէ որքան շուտ են գրգռվում ժողովուրդի մէջ վատ կրքերը: Ուստի Արնէրին նա նամակ գրեց խնդրելով, որ անօրինութիւն անէ, որ միւս օրը կատարեալ կարգ եւ անգործութիւն պահպանուին, իսկ ինքն որոշեց միւս օրն առաւօտեան քարոզ ասել ժողովրդին եւ անձամբ ուղեկցել թշուառ մարդուն մինչեւ իր պատժարանը:

Արնէրն անմիջապէս կատարեց քահանայի ցանկութիւնը, եւ նոյն երեկոյեան ժողովուրդն իմացաւ, որ ով կհամարձակէ ծաղրածութիւններ, աղմուկներ կամ ուրիշ օրելիցեց ցոյց անել Հուսմէլի դէմ, անմիջապէս կբանտարկվի:

Միւս օրն առաւօտը քահանան ժողովրդին քարոզ ասաց: Օգուտ քաղելով Հուսմէլին պա-

տահած անցքից, նա խօսեց պակասութիւնների եւ հարստութեան վերա եւ թէ ո՛րքան հեշտ է մարդուն անիրաւութեան ճանապարհը բռնել եւ թէ ո՛րքան դժուար է այն ճանապարհից դառնալ: Նա կարծես ամենքի սիրտն էր թափանցում, նոցա գաղտնի խորհուրդները տեսնում եւ իրանց հոգին իրանց առաջ բանում:

Փողովուրդի գութը շարժվեցաւ եւ այնուհետեւ յանցաւորին ոչ թէ ատելութեամբ եւ արհամարանքով էին նայում, այլ խղճալով եւ ցաւակցելով, միեւնոյն ժամանակ ակամայ իրանց մեղքերը խոստովանելով:

Քարոզ վերջացնելուց յետոյ, քահանան մօտեցաւ Հումմէլին, քաղցրութեամբ խօսեց նորահետ, ստիպեց կերակուր ուտել եւ հետը միասին պատժարան գնաց:

Դահլիճն արդէն սպասումէր այնտեղ: Նա Հումմէլի աջ ձեռք կախաղանին կապեց, երեք մատին սեաւ ներկ քսեց եւ բարձրաձայն ասաց, դառնալով փողովորդին, որը լուռ կանգնած էր այնտեղ գլխաբաց. «Թող ձեզանից իւրաքանչիւրը մտքում ունենայ: Ով մահից աւելի չէ վախենում այսպիսի խայտառակութենից, անշուշտ նա եւս նոյն ճանապարհով է գնում, որով այս անբաղձն էր գնում:»

Թեղծ Հումմէլն հազիւ կարողանումէր ոտի վերայ կանգնել, երբ նորա ձեռն արձակեցին: Քահանան, այս նկատելով հրամայեց որ նորան իր սեփական կառքը նստեցնեն եւ Բօննալի բանտը տանին: Իսկ ինքն ոտով գնաց:

Այն օրը Լինհարդ եւ Գէրտրուդն տանը մնացին եւ բոլոր ժամանակ, քանի որ, սովորութեան համաձայն Բօննալի եկեղեցու զանգակներն թաղման եղանակն էին խփում, նոքա իրանց մանուկների հետ խեղճ յանցաւորի համար ջերմ աղօթք էին անում:

ԺԷ.

Միւս օրն առաւօտը Գէրտրուդը, մեռնող պառաւ կնոջ տուած խօստումն յիշելով, Բուդիի տուն գնաց: Բուդին եւ մանուկներն նոր էին քնից վերկացել: Սենեակում ամեն բան անկարգ էր. երէկվան ամանները դեռ լուացված չէին, չորերը թափված, էին յատակի վերա. անկողինները հաւաքված չէին: Գէրտրուդը լաւ հասկանում էր թէ ի՛նչպէս վատ է ներգործում այսպիսի անհոգութիւնը մանուկների վերա, նոյնպէս հասկանումէր, որ Բուդին, իրան եկած անբաղձութիւնից վշտահարված, տան մասին հոգալուց դադարել էր եւ կարծումէր թէ այժմ, երբ իր արօտատեղին իրան էր վերադարձել, այնուհետեւ ամեն բան ինքն իրան կարգի կընկնէ: Գէրտրուդն այս ամենը բացատրեց Բուդիին աւելացնելով, որ կարգը կրթութեան գլխաւոր հիմն է: Յետոյ նա մանուկներին լուաց եւ սնորեց, մաքրել տուեց նոցա իրանց չորերը, սենեակի լուսամուտները բացեց եւ բոլոր սենեակը աւելեց մաքրեց: Սկզբում Բուդին եւ մանուկները միայն նայումէին նորան, բայց յետոյ իրանք

եւս սկսեցին աշխատել, եւ մի երկու ժամից յետոյ Գէրարուզը տեսաւ, որ նոքա կարող են այժմ առանց իրան շարունակել: Ուստի նա Բուզիին ասելով, որ երեկոյեան երեխաներին իր մօտ ուղարկէ, եթէ նոքա լաւ կօզնեն իրան, վերադարձաւ տուն: Երեկոյեան մանուկներին Գէրարուզի մօտ ուղարկելիս, Բուզին առաջին անգամն էր, որ ուշք դարձրեց, որ նոքա ձեռներ լուսնային եւ շորերը մաքուր լինէին: Փոքրիկ հիւրերը տեսան, որ Լինհարզի բոլոր երեխաները մանուկ էին: Նոքա քաղցր եւ ուրախ սրտով ողջունեցին իրանց հիւրերին եւ շարունակեցին իրանց գործը:

— Վերջացրէք շուտ ձեր դասը, ասաց Գէրարուզ, մինչեւ վեց ժամը դուք կարող էք դեռ դուրսը խաղալ:

— Լաւ, մայրիկ, կշտապենք:

— Բայց նայեցէք, որ ձեր մանուածքը կողկտ չլինի:

— Ոչ, մայրիկ, ոչ, իմ մանուածքի համար գուցէ դեռ աւելորդ փող եւս ստանաս, ասաց Լիզէլին:

— Մեր մանուածքի համար եւս:

— Տեսնենք պարծենկոտաներ:

Բուզիի մանուկները կանգնել էին, աչքերը ցցած: Փոքրիկ յարմարաւոր սենեակում այնպէս եռանդով էին աշխատում, որ իրանք մտածել անգամ չէին կարող:

— Դուք գիտէ՞ք մանեւ, եթէ կամենում էք, ես ձեզ կսովորեցնեմ: Իմ երեխաներս լաւ են աշ-

խատում եւ արդէն փոքր ինչ վաստակ եւս ունին, ասաց Գէրարուզ:

— Խնդրում ենք, սովորեցրէք մեզ:

Այս միջոցին մանուկներն իրանց գործը վերջացրին եւ ժողովեցին, համբուրեցին մօրը եւ իրանց հիւրերի հետ ուրախ վազեցին դուրս: Այնտեղ նոքա սկսեցին զուարճալի խաղեր: Բայց Բուզիի երեխաները շուտ նկատեցին, որ նոքա աշխատում էին իրանց շորերը պահպանել, որ չպատառվին եւ չկեղտովին: Գրեթէ ակամայ իրանք եւս սկսեցին նոցա հետեւելով զգուշանալ:

Իսկ երբ վեց ժամը խփեց, նոքա երկար շարք կազմեցին «Կատուի պոչ» այսպէս էին կոչում այս խաղը. միմեանց շորից բռնած ամբողջ բակի շուրջ պտոյտ տուին եւ վերադարձան տուն:

— Մենք այժմ կաղօթենք, դուք եւս աղօթեցէք մեզ հետ:

Դուք տանը ե՞րբ էք աղօթում, հարցրեց Գէրարուզը:

— Ինեւրոց առաջ, ինչպէս կը պատահէ, ասաց Բուզէլին:

— Կամ երբ մթնում է, ասացին միւսները:

— Ուրեմն դուք եւս աղօթեցէք մեզ հետ:

Գէրարուզը մանուկների հետ աղօթելուց յետոյ, ճանապարհ ձգեց հիւրերին մինչեւ փողոց, իսկ նոքա դեռ երկար կանչում էին նորան ետեւից:

— Մնաս բարով, բարի գիշեր: Մնաս բարով:

— Նորից եկէք, ես ձեզ գործ կտամ, պատասխանեց Գէրարուզը:

ԺԸ.

Քահանան իր բոլոր ազատ ժամանակն անցուցանում էր Հուսիմէլի հետ եւ ամեն կերպով աշխատում էր սիրտ տալ եւ հանգստացնել խեղճին, որը բոլորովին ընկճվել էր իր դժբաղդութենից:

Քահանան կարողացաւ փոքր առ փոքր նորան հանգստացնել եւ Հուսիմէլ սկսեց խօսել եւ իր անցեալը պատմել: Սկզբում նա քաշվում էր ուրիշների մասին խօսելուց, բայց քահանան հասկացրեց, որ սա միակ միջոց է որքան եւ իցէ նուազեցնելու իր հասցրած չարիքը: Եւ Հուսիմէլ սկսեց առանց քաշվելու խօսել: Նորա պատմածը հեռզհեռէ պարզում էր քահանային գիւղի ներքին կեանքը, եւ նա հասկացաւ, որ շատերը գրեթէ նոյնքան յանցաւոր էին, որքան եւ Հուսիմէլը եւ թէ մեծ ջանք պէտք էր գործ դնել մի բան փոխելու համար: Սակայն Հուսիմէլի նախկին գործակիցները, ամենքը գիւղի հարուստ եւ ազդեցիկ մարդիկ, երկու կողմից շփոթված էին. նախ որ իմացել էին թէ Հուսիմէլ ամեն բան պատմում է քահանային, երկրորդ, որ վճռել էին ամեն ջանք գործ դնել հասարակական հողերը բաժանելուն արգելք դնել: Նոքա փորձ արին Հուսիմէլին կաշառելու, որ նա լռէ: Յետոյ սկսեցին ամեն հրնարներ պատել Արնէրին քահանայի հետ կովեցնելու, կամ գիւղի մէջ ազմուկ, խռովութիւն ձգելու, որ հողերը բաժանելու խնդիրը յետաձգուի: Ուստի սկսեցին ամեն տեսակ անմիտ

լուրեր տարածել Արնէրի, Լինհարդի, քահանայի մասին: Բայց այս լուրերին քիչ էին հաւատում: Յետոյ նոքա մտածեցին Արնէրի վերա ազդելու նոր տանուտէր Մայիէրի միջոցով, որը թէպէտ բարի, բայց թոյլ բնաւորութեան տէր մարդ էր: Նոքա համոզեցին նորան, որ նա գնայ կալուածատէրի մօտ եւ ասէ թէ հողերի բաժանումն կարեւոր է մինչեւ աշունը յետաձգել, որովհետեւ գիւղացիներն այժմ նոր կովեր են գնել եւ խոտը կպակասէ, եթէ անասուններին հասարակաց հողերի մէջ չարածեն: Իսկ եթէ Արնէրն անշուշտ կամենումէ այժմ սկսել բաժանել, թող փորձի համար բաժանէ փոքրիկ մասը արօտատեղի վերին ծայրը, մինչեւ տեսնենք թէ ինչ դուրս կգայ սորանից: Այս երկու առաջարկութիւններն եւս խորամանկութիւն էր. խոտը բաւական կար գիւղում. իսկ հողի այն մասն, որ առաջարկում էին բաժանել, բոլորովին անպիտան, քարքարոտ հող էր, եւ նոքա յոյս ունէին, որ այն հողը ստացունէրը դժգոհ կլինէին եւ Արնէրին կհամոզէին թէ պետք չէ հողերը բաժանել: Նոքա կարծում էին թէ Արնէրն ինքն գործին տեղեակ չէ եւ շուտով կհամոզվի:

ԺԹ.

Լինհարդ եւ Գէրտրուզը բոլորովին հեռու էին մնում այս խառնակութիւններից: Լինհարդ շիտովեան վերա էր աշխատում, իսկ Գէրտրուզը տան հոգսերով եւ մանուկների կրթութեամբ էր զբաղւած: Բուզի մանուկներն այժմ գրեթէ ամ-

բողջ օրեր նորա մօտ էին անցուցանում, փոքր առ փոքր սովորում էին աշխատել եւ հոգ տանել իրանց եւ իրանց շուրջ եղած ամեն բանի մասին: Գէրարու գի երեսնաներն ամբողջ օր զբաղած էին եւ միշտ ուրախ, — ձանձրանալու ժամանակ չունէին: Նոցա կարել եւ մանեւ սովորեցնելիս Գէրարու գ միեւնոյն ժամանակ երգեր եւ սաղմոսներ էր սովորեցնում. երգում էր նոցա հետ եւ ամեն օր Աստուածաշունչը կարգում: Առաւել սրտաշարժ պատմածները մանուկները կրկնում էին նորա խօսքերով այնքան, մինչեւ որ անգիր կտերտէին: Բացի սորանից նոքա թուերի վարժութիւններ էին անում եւ սորա համար գումարում էին եւ հանում էին ինչոր աչքերին էր ընկնում:

Արեւէր նոյնպէս անգործ չէր. նա վճռեց իր բոլոր ուժերը նուիրել իր գիւղացիների վիճակը թեթեւացնելու եւ կեանքը բարւոքելու, որոնք թշուառ դրութեան մէջ էին գտնվում: Բայց նա հասկանում էր, որ սորա համար նա ինքն լաւ պիտի իմանար գործը, ուստի ամեն օր դնում էր գիտում էր հասարակական հողերը, ամեն մի կրտոր հողն ինքն անձամբ հետազոտում էր եւ ուսումնասիրում թէ ո՞ր հողն ինչի համար է պիտանի եւ իր կալուածների մանրամաս մակարդակը կազմեց: Այս գործը բաւական ժամանակ խլեց նորանից, բայց նա այժմ գիտէր թէ ինչպէս պէտք էր բաժանել հողը, որ ոչ ոք զրկված չմնար: Միեւնոյն ժամանակ նա յաճախ տեսնվում էր քահանայի հետ եւ գիւղական գործերի մասին խօսում:

Քահանայի գործն եւս քիչ չէր. շատերը նորան էին դիմում խորհրդի եւ օգնութեան համար, մանաւանդ Հուսէյին անդադար հոգածութեան եւ մտիթարութեան էր կարօտում. այն գժբաղդէին թուում էր թէ ամենքը նորան մոռացել են եւ թէ այժմ ոչ ոք այլ եւս օգնութեան ձեռք չէ մեկնի նորան:

Մի անգամ Բուգին քահանայի մօտ եկաւ եւ ասաց, որ կամենում է Հուսէյին տեսնել, իր հանգուցեալ մօր խօսքերն ասել նորան եւ յայտնել, որ իրան վերադարձրած արօտատեղից գոյացած խոտի երրորդ մասը տալու է նորան եւ նորա կնոջը քանի կենդանի են:

Երբ Հուսէյն այս բոլորը լսեց ծուռի չոքեց եւ ոչ մի խօսք չկարողացաւ արտասանել: Մանաւանդ չարժեցին նորա սիրտը Բուգիի մօր խօսքերը, եւ նա չէր կարողանում ներել իրան իր վարմունքը նորա հետ: Բայց այս օրից նորա սիրտը բոլորովին մեղմացաւ, նա ջերմ արտասուք թափեց եւ ջերմեւանդ արար աղօթեց:

Ի.

Այս միջոցին Հուսէյին կինը, իր քաջած թշուառութիւնների ներգործութեամբ, ծանր հիւանդացել էր: Գիւղական տգէտ բժիշկն շատ վնասել էր նորան եւ երբ քահանան այցելեց նորան, տեսաւ, որ նա շատ ապրելու չէ եւ իր իշխանութեամբ որոշեց Հուսէյին այս գիշեր բանտից արձակել իր կնոջ մօտ գնալու, այն պայմանով

որ առաւօտ բանտ վերադառնար: Այրն եւ կինն արտասուեցին միմեանց տեսելիս եւ ամբողջ գիշերը խօսակցումէին: Երկուսն եւս միմեանց մէջ մեծ փոփոխութիւն տեսան: Կինը մարմնով բոլորովին թուլացել էր, իսկ Հումմէլը հոգևով շատ մեղմացել էր: Հումմէլ պատմումէր նորան թէ քահանան որքան բարութեամբ էր վարվում իր հետ, թէ որքան լուսաւորել էր իր հոգին, ցոյց տալով թէ ինչ է մարդու ճշմարիտ բաղդաւորութիւնը, թէ ինչպէս Ռուբին եկել էր իր մօտ, իր մօր վերջին խօսքերը հաղորդել եւ խոստացել արօտատեղի խոտի մի մասն իրան տալ:

Հումմէլի կինն եւս պատմումէր նորան թէ նա եւս կարեկցութիւն եւ օգնութիւն էր գտել նոցա կողմից, որոնց զրկել էին իրանք, նոյնպէս եւ աղքատների կողմից: Իսկ նոքա, որոնք շնորհապարտ էին իրանց, որոնք առաջ ուրախութիւն էին անում ամբողջ օրերով իրանց մօտ, նոքա միայն ծիծաղումէին իրանց վերա եւ հայհոյում:

Հումմէլ մտածում էր, թէ որքան խաղաղ եւ լաւ կապրէին իրանք այսուհետեւ: Բայց կինն գգումէր, որ երկար չէ կարող ապրել:

Նոքա ամբողջ գիշերն այսպէս անցուցին եւ Հումմէլի շունը, շղթայից արձակվելով, բոլոր գիշերը պառկած էր նորա ոտների տակ եւ ձեռներն էր լիզում:

Գիւղի մէջ իմացել էին Հումմէլի տուն գալը եւ վճռեցին օգուտ քաղել այս հանգամանքից քահանային վնասելու: Նորան Արնէրի աչքից հանել եւ միմեանց հետ կուռեցնել:

Գիւղացիները Հումմէլի ճանապարհը պահում էին, եւ երբ նա առաւօտեան վաղ բանտ էր վերադառնում, սկսեցին աղմուկ հանել, ծաղրել նորան եւ ամենքին յայտնումէին այն հանգամանքը թէ քահանան արձակել էր նորան բանտից առանց Արնէրի թոյլտուութեան:

Նոցա խորհրդով Մայիէր որոշեց այս բանն Արնէրին յայտնել:

ԻԱ.

Քահանան ինքն արդէն գրել էր այս Արնէրին եւ նամակն ուղարկել էր Միքելի ձեռքով, որն առաջ Հումմէլի գործակիցն էր, իսկ այժմ Լինհարգի ամենալաւ բարեկամ: Քահանան կամենում էր, որ Արնէրն ինքն խօսէր Միքելի հետ: Միքէլը կարող էր նորան օգնել գիւղի մէջ արմատացած չարիքների դէմ պատերազմելիս: Արդարեւ Միքէլն իրան եւս խնայելով պատմեց պարոնին թէ ինչ գործեր էին կատարվում գիւղի մէջ նորա պապի օրով, թէ ինչպէս հարուստներն օգուտ էին քաղում չունեւորներից եւ տանուտէրների օգնութեամբ նոցա վերջին ունեցածը խլում, թէ ինչպէս ամբողջից զանազան իրեր էին գողանում, որոնք այժմ եւս շատ աներում կարելի է գտնել եւ այլն: Նա ասում էր նոյնպէս թէ որքան կաշկանդում է մարդուն մի անգամ գործած յանցանքը եւ թէ որքան դժուար է մարդուն իր կեանքը փոխել: Նա ասում էր թէ միայն արդարութեամբ եւ բարութեամբ վարվե-

լով մարդիկների հետ կարելի է նոցա ուղղել։ Այս նա ինքն իր վերա է փորձել. ոչ համոզական խօսքերը, ոչ սպառնալիքը եւ ոչ պատիժը կարող էին իրան ուղղել, այլ միայն Լէնհարդի բարու-թիւնը նորա սիրտը շարժեց եւ նորա կեանքը փոխեց։

Միքէլին արձակելիս Արնէր պատուիրեց նորան, որ ամբողջից գողացած բոլոր իրեղէնների ցուցակը բերէ, նշանակելով թէ ում մօտ ինչ է գտնվում։

Միքէլը գնաց թէ չէ, պարոնին յայտնեցին թէ եկած է տանուտէրը։ Մայիերի դէմքից Արնէրն հասկացաւ որ նա վրդովված է։ Եւ իրաւ Մայիէրն իսկոյն սկսեց խօսել արօտատեղի մի փոքր մասը միայն բաժնելու մասին։ Բայց Արնէր, լաւ ճանաչելով այն հողը, պարզ տեսաւ, որ դա միայն որոգայթ էր եւ անմիջապէս ասաց այդ Մայիէրին։ Թէպէտ նա շփոթվեցաւ, սակայն դարձեալ իր ասածն էր շարունակում, առաջ բերելով անասունների բազմութիւնը եւ խոտի պահատութիւնը։ Այն ժամանակ Արնէր նորան պատուիրեց, որ մի գիւղացու օգնութեամբ գիւղացիների մօտ եղած խոտը չափէ եւ անասունների թիւն իմանայ։ Այս առաջարկութիւնը բոլորովին չփոթեցրեց տանուտէրին։ Նա քիթը կախած հեռացաւ հազիւ քանի մի խօսք մրմնջելով, թէ քահանան Հումմէլին արձակել էր տուն։

— Ես այդ արդէն գիտեմ եւ շատ շնորհակալ եմ քահանայից, որ ուզք է դարձնում այն խեղճ մարդուն, ասաց Արնէր։

Մայիէր գնաց տուն եւ իր անյաջողութիւնը դրացիներին պատմեց։ Գիւղացիներն այս իմանալով զայրացան եւ սկսեցին հայհոյել նորան եւ Արնէրին։

— Մենք կարծում էինք թէ կկարողանաս այս գործը գլուխ բերել, բայց դու յիմարի պէս իսկոյն լուել ես։

— Դէ՛հ գնա համարիր անասուններն, չափիր խոտը։ Տեսնենք թէ ինչ դուրս կգայ։

Տանուտէրը գնաց այն գիւղացու մօտ, որին Արնէր իրան օգնական էր նշանակել։ Բայց նորան առաջուց իմացրել էին, որ նա այն ամբողջ օրը բացակայ լինի, եւ Մայիէր տանը գտաւ միայն նորա փոքր աղջկան, որից ոչինչ չկարողացաւ իմանալ։ Այն ժամանակ նա դարձաւ գիւղացիների մօտ եւ խնդրեց, որ օգնեն իրան։ Բայց լսել անգամ ոչ ոք չէր կամենում, — ամենքը նորա երեսին միայն ծիծաղում էին։ Իսկ միայնակ եւս այս գործն սկսելն անհնարին էր։

Վերջապէս գիւղացիներից մին, հասկանալով, որ պէտք է որ եւ իցէ ցուցակ ներկայացնել պարոնին, առաջարկեց, որ իւրաքանչիւրն ինքն ասէ Մայիէրին թէ որքան անասուն եւ խոտ ունի, իսկ նա թող գրէ Արնէրին ներկայացնէ։ Այս ասելիս նա անդադար աչքով էր անում գիւղացիներին, որոնք նորա միտքը հասկանալով, ընդունեցին առաջարկութիւնը։ Իւրաքանչիւրն ասաց որքան անասուն եւ խոտ ունէր, բայց ոչ ոք չհամաձայնեց այս ցուցակը ստորագրել։

ԻԲ.

Միւս օրն առաւօտեան վաղ Արնէր գիւղ եկաւ եւ սովորութեան համաձայն քահանայի մօտ իջաւ : Նա գիտէր, որ հարուստ գիւղացիները, Հոռմէլի նախկին գործակիցները, վճռել էին նորան ընդգիմանալ, եւ այսօր կամենում էր նոցա ցոյց տալ, որ այժմ նոքա չեն կարող առաջվան պէս բոլոր գործերն իրանց ձեռքն առնել եւ աղքատներին հարստահարել : Այս առաջին քայլը պիտի լինէր գիւղի գործերը բարւոքելու եւ գիւղի բարօրութիւնը բարձրացնելու : Ուստի Արնէր յուզված սպասում էր այն օր նշանակուած ժողովին : Միքէլը բերել էր ամրոցից գողացված իրերի ցուցակը, իսկ Մայիէրը — անասունների եւ խոտի ցուցակը : Տանուտէրն ասաց, որ ինքն անձամբ չկարողանալով ցուցակը կազմել, ցուցակը իւրաքանչիւր գիւղացու ցուցման եւ ազնիւ խօսքի համաձայն էր կազմել :

— Բայց ի՞նչի իրանց ցուցմունքը ստորագրած չեն :

Մայիէր լուռ էր :

— Այս բոպէիս վերջրու ցուցակը եւ տար թող իրանք երկու հոգի ընտրեն եւ նոքա ցուցակը ստորագրեն :

Մայիէր առանց ձայն հանելու կատարեց պատուէրը :

Երբ նա գիւղացիներին յայտնեց Արնէրի կամքը, նոքա սկզբում հրաժարվեցան կատարելու :

Մայիէր պատասխանեց թէ նա նոյնութեամբ կ'յայտնէ պարոնին եւ թէ ինքն այլ եւս չէ կամենում նոցա ամեն արարքների պատասխանատու լինելը Գիւղացիները ստիպուեցան Արնէրի պատուէրը կատարելու :

— Լաւ, ասաց Արնէր, երբ տանուտէրը նորան ստորագրած ցուցակը բերեց :

Յետոյ նա պատուիրեց, որ ժողով հաւաքելու զանգակը խփեն եւ երբ ամենքը կհաւաքվին, հրապարակի շուրջ պահապաններ դնեն եւ պատուիրեն նոցա, որ ոչ ոքին թոյլ չտան ժողովից տուն գնալու :

ԻԳ.

Ժողովն հաւաքվեցաւ հրապարակի մէջ : Հարուստ գիւղացիներն հաւատացած էին, թէ կարողացան Արնէրին խաբել եւ գոնէ հողերը բաժանելու միտքն յետաձգել : Նոքա ճտուեր էին պատրաստել քահանայի դէմ Արնէրի նորա վերա ունեցած վստահութիւնն ոչնչացնելու եւ չունեւորների առաջ սովորականից աւելի էին խորխուում :

Այս միջոցին շտապով եկաւ մի գիւղացի, որը միշտ եւ ամեն տեղ ուշ էր գալիս, եւ պատմեց թէ ինքն տեսել է, որ Մայիէրը Միքէլի եւ պարոնի ծառաներից մինի հետ շրջում է անէ տուն եւ անասուններին համարում եւ խոտը չափում : Այս լուրը չափազանց վրդովեցրեց շատերին, մանաւանդ հարուստ գիւղացիներին, եւ յանկարծ ամենքը ցանկացան տուն գնալ. մին չու-

բուխն էր մոռացել, միւսը ծխախոտը, մին կնոջը խօսք ունէր ասելու, միւսը անասուններին խոտ պիտի տար... բայց որքան զարմանք պատեց նոցա, երբ տեսան, որ տուն գնալ արգելեցին: Դժկամակելով հրապարակ դարձան. նոքա հասկացան, որ իրանց սարքած թակարդի մէջ էին ընկել: Աղքատները, նայելով նոցա երեսին, հազիւ կարողանում էին իրանց ծիծաղը պահել:

Այն միջոցին քահանայի ծառան Արնէրի հրաման բերեց, որ բոլոր ժողովածներն անյապաղ իր մօտ գան քահանայի տուն: Նոքա եկան: Արնէր քաղցրութեամբ ընդունեց նոցա եւ կամենում էր նոցա համոզել, որ իրանց յանցանքն իրանք խոստովանեն: Բայց նոքա նորա բարութիւնը անտեսելով, խիստ եւ կոպիտ պատասխաններ էին տալիս, եւ Արնէրն, իր նպատակին չհասնելով, ամենքին յետ դարձրեց:

Փոքր ինչ յետոյ Արնէր ինքն ժողով գնաց եւ գրագրին հրամայեց, որ ամբողջ գողացված իրերի ցուցակը կարգայ եւ իսկութեամբ յայտնէ թէ ինչ ում մօտ է գտնվում: Մեծ մասամբ իրերը, մանաւանդ առաւել թանկագինները, հարուստների մօտ էին: Նոքա հասկացան, որ Արնէր կարող էր իսկոյն եւ եթ նոցա բանտ ուղարկել, որովհետեւ շատ իրեղէնների (սայլերի, գութանների եւ երկրագործական ուրիշ գործիքների) վերա գես եւս մնում էր ամբողջ գրողը: Նոքա չոքեցին նորա առաջ եւ ներողութիւն խնդրեցին: Այն ժամանակ Արնէր նոցանից հարցրեց թէ ի՞նչի քահանայի, Լինհարդի եւ Գէրտրուդի

մասին վատ լուրեր էին տարածում, եւ թէ ի՞նչի էին առաջարկում, որ արօտատեղի մի մասը միայն բաժանվի: Գիւղացիները ստիպուած խօստովանեցին, որ իրանք ամեն հնարներ գործ էին դնում, որ արօտատեղի բաժանումն խախտեն եւ այս նպատակով աշխատում էին գիւղի մէջ խռովութիւն ձգել: Այն միջոցին եկաւ Մայիէր նոր ցուցակով. երեւեցաւ որ նոքա անխղճմտաբար խորէլ էին Մայիէրին, միեւնոյն նպատակով անասունների թիւը շատ, եւ խոտի չափը պակաս ցոյց տալով:

Այն ժամանակ Արնէր ամբոխի մէջից դուրս կանչեց տասներկու առաւել չունեւոր գրեթէ մուրացկան գիւղացիներին, որոնք նոյն ժողովին ցնցոտի հազուատով էին եկել, եւ հրամայեց նոցա նստել, իսկ յանցաւորներին հրամայեց նոցա առջեւ չոքել եւ նոցանից ներողութիւն խնդրել: — Դուք կամենում էիք զրկել ոչ թէ ինձ, այլ ձեր աղքատ համագիւղացիներին, ասաց նա նոցա: Եւ հարուստները ստիպուած էին չոքած ներողութիւն խնդրել աղքատներից:

Այնուհետեւ Արնէր ժողովին իր միտքը յայտնեց թէ ինչպէս պիտի բաժանվի արօտատեղը, ցոյց տուեց այն օգուտներն, որոնք կարելի է ստանալ հողի քանի մը մասներից, եւ թէ ինչ միջոցներով կարելի է միւս մասները բարւոքել: Բայց որովհետեւ Արնէր գիտէր թէ որքան դժուար էր գիւղացիների համար, ընդհանուր աղքատութեան միջոցին, հողի բարւոքումն ձեռնարկել ինքն յանձն առաւ այս գործը: Յետոյ

նա առաջարկեց ազատ հող ունեցողներին, որ պողառու ծառեր տանին ձրի իր նորատունկ պարտեզից, որովհետեւ շատ էր ցանկանում, որ իր գիւղի մէջ պողարերու թիւնն առատ լինի:

ժողովուրդն արտասուքն աչքերին շորհակալութիւն յայտնեց նորան եւ առանց վախենալու նորից ձնչվելուց, բացարձակ ուրախանում էր:

Այնուհետեւ Արնէր ժողովն արձակեց եւ տուն վերադարձաւ: Նորա հոգին լցված էր իր կատարած պարտականութեան սուրբ զգացմամբ եւ ուրախութեամբ:

ԻԴ.

Հումմէլի կնոջ առողջութիւնն օրէցօր վատանում էր: Նա զգում էր, որ երկու երեք օրից աւելի կեանք չունի եւ շատ ցանկանում էր իր վերջին հրաժեշտը տալ իր ամուսնին: Քահանան անմիջապէս արձակեց Հումմէլին եւ թոյլ տուեց մինչեւ իւր կնոջ մահը նորա մօտ մնալ:

Երբ այր մարդն տուն եկաւ, կինը պինդ սեղմեց նորա ձեռքը եւ ասաց.

— Ներիր ինձ բոլորն, ինչ որ մեղանջած եմ քո դէմ:

— Դու չպիտի ինձնից թողութիւն խնդրես — պատասխանեց այրը, դառն արասուք թափելով. ես եմ եղել քո կեանքիդ բոլոր դժբաղդութիւնների պատճառը:

— Այժմ ամեն բան վերջացած է: Աղօթիր ինձ համար, իսկ ես ուրախութեամբ ընդունում եմ

մահը: Մեր այժմ փոխված հանգամանքների մէջ ես ծանր բեռ կլինէի քեզ համար:

— Ոհ, մի՛ խօսիր այդպէս ի սէրն Աստուծու: Վշտից սիրտս պատառվում է:

Այն միջոցին մտաւ քահանան, եւ հիւանդը ձեռները մեկնեց նորան: Քահանան նստաւ հիւանդի մօտ, մտիթարում էր եւ հանգստացնում էր նորան, եւ որքան կարող էր աշխատում էր թեթեւացնել նորա տանջանքները:

— Ձեռ կամենում արդե՞օք հրաժեշտ տալ այն չունեւորներին, որոնց դուք ձեր կեանքում շատ զրկանքներ էք տուել, հարցրեց նա հիւանդից:

— Ոհ, որքան ուրախ կլինէի: Բայց նոքա իմ մօտ չեն գայ:

— Մի՛ վախենար ես հաւատացած եմ, որ ամենքն յօժարութեամբ կգան:

Այն ժամանակ հիւանդը դարձաւ իր ամուսնին եւ ասաց.

— Ես աւելի հանգիստ կմեռնէի, եթէ կարողանայի նոցանից ներողութիւն խնդրել: Դու կգնաս արդե՞օք եւ կխնդրես, որ գան:

— Առաւել լաւ է, ես իմ Հանրին ուղարկեմ, թող Հումմէլը քեզ հետ մնայ, ասաց քահանան:

— Ոչ, ես աւելի կցանկայի, որ նա ինքն գնար, ասաց հիւանդն, իր ամուսնի ձեռք սեղմելով:

— Այո, ասաց Հումմէլ — աւելի՞ լաւ է ես ինքս գնամ:

Քահանան արգելք չեղաւ:

Հումմէլ գնաց ամեն չունեւորների կամ իր

զրկած գիւղացիների մօտ եւ արտասուելով խնդրում էր նոցանից, որ դան իր մեռնօղ կնոջ վերջին ողջոյն առնելու: Գրեթէ ամենքի գուլթը շարժվեցաւ եւ յօժարութեամբ խոստացան գալ եւ նորա համար աղօթել:

— Աստուած ողորմած է, կարելի է դեռ առողջանայ, ասում էին ոմանք:

— Թող հանգիստ լինի, մենք վաղուց նորան սրտանց ներած ենք, ասում էին ուրիշները:

Միայն քանի մի հոգի սառն ընդունեցին նորան, բայց նոքա եւս տեսնելով թէ Հուսմէլն որքան խոնարհութեամբ էր տանում նոցա խօսքերը, շուտ իրանց անարգական խօսքերն յետ էին առնում:

Ամենքը խոստացան հիւանդի մօտ գալ միւս օր առաւօտեան ութն ժամին:

Միւս օրն առաւօտ հիւանդը զարթեց, քնելուց փոքր ինչ կազդուրված: Արեգակն ուղղակի նորա լուսամտի վերա էր:

— Վերջին անգամ եմ տեսնում քեզ երկրիս վերա, — այս էր հիւանդի առաջին մտքը. — միւս աշխարհում նոր փայլով կտեսնեմ քեզ:

Երբ նա զարթեց, Գէրարուզը, որը նորա հիւանդութեան ամբողջ ժամանակ շատ էր օգնել, արդէն եկել էր: Գէրարուզը քնքշութեամբ խընամում էր նորան, ուղղում էր նորա բարձերն եւ վերմակը, օգնում էր միւս կողքի վերա դառնալու, եւ այժմ սենեակի մէջ աթոռներ եւ նստարաններ էր տեղաւորում հիւրերի համար: Մեռնօղը հեզութեամբ շնորհակալութիւն յայտնեց Գէրարուզին:

Շուտով քահանան եւս եկաւ: Իսկ Հուսմէլ ամբողջ ժամանակ չոքած էր նորա անկողնի մօտ:

Մօտ ութն ժամին, նախընթաց օրն հրաւիրված բոլոր ազքատները հաւաքվեցան դրան մօտ բայց ներս չէին մտնում, միմեանց սպասելով, միասին մտնելու համար, որ աւելորդ ազմուկ չլինի: Շատերը երեսաներով էին եկել, վերջապէս դուրս եկաւ քահանան եւ նոցա ներս հրաւիրեց: Շատերը մինչեւ անգամ կօշիկներն հանեցին եւ բոպիկ մտան ներս:

Հիւանդն ամեն մինին գլուխ տալով էր բնդունում: Երբ ամենքը ներս մտան, նա խնդրեց, որ նստին եւ ասաց — Մենք ձեզ շատ զրկանքներ եւ վիրաւորանքներ ենք հասցրել, ներեցէք ինձ: Շատ շնորհակալ եմ, որ խնայեցիք ինձ եւ եկաք: Ես այդքան չէի խնայում ձեզ, ես երեսս էի դարձնում ձեզանից, երբ ինձ կարիք էիք ունենում. խորում էի ձեզ շափելիս եւ կշտելիս, ապրանքը բարձր գնով էի ծախում: Մենք շատ մեղաւոր ենք, ամբողջ գիւղի դժբաղդութեան պատճառ լինելով: Ուստի եւ պատժվեցանք: Ուրեմն ներեցէք ինձ իսէրն Աստուծու: Ես այժմ բացի զղջումից սչնչով չեմ կարող ուզել իմ գործած չարիքները: Ներեցէք ինձ եւ աղօթեցէք ինձ համար: Հաւատով Հայր մեր ասացէք ինձ համար: Եւ հիւանդն իր ամուսնի ձեռքն առնելով ուշաթափ եղաւ:

Քահանան եւ նորա հետ բոլոր ներկայ գլուխօղները չոքեցին եւ միասին Հայր մեր ասացին: Յետոյ հանդարտ դուրս գնացին, ամենքի, նայն

իսկ մանուկների աչքերն արտասուքով լցված : Շատերը մինչեւ իրանց կեանքի վերջը յիշում էին այս բուսկն :

Սորանից քանի մի ժամ յետոյ հիւանդն հանգիստ հոգին աւանդեց :

Մեծ բազմութեամբ էր յուզարկաւորում նորա դագաղը , ժողովուրդն , այրեր եւ կանայք : Ամենքը գնում էին լուսեամբ եւ բարեկամաբար Հումմէլի ձեռք էին սեղմում : Նոյն ինքն Արնէր դագաղի ետեւից էր գնում իր բարեկամ Գլիւլֆիի հետ : Գլիւլֆի նախկին սպայ էր եւ ապրում էր Արնէրի մօտ եւ նորան կալուածները կառավարելու օգնում էր :

Թաղումից յետոյ Հումմէլ նորից բանա վերագարձաւ : Բայց Քահանան Արնէրից շատ էր խնդրում , որ խեղճին ներէր : Արնէր քահանայի խնդիրը կատարեց :

ԻԵ.

Արնէրի , նորա բարեկամ Գլիւլֆիի եւ քահանայի բոլոր ուշքն ու միտքն այն էին , որ գիւղի դրութիւնը բարւոքեն , նորա բարոյականութիւնը եւ բարեկեցութիւնը բարձրացնեն : Բայց նոքա հասկանում էին թէ որքան դժուար էր այս նպատակին հասնելն առանց նոյն ինքն ժողովրդի օգնութեան . ուստի աշխատում էին լուսագոյն գիւղացիներին իրանց կողմը քաշել : Գիւղացիների մէջից առաւել որոշվում էին հարուստ Մայիէրը , նորա քոյր Մարէլլին եւ արդէն մեզ ծանօթ Գէրարուդը , Արնէրն հնարաւ որ միջոցներից օգուտ էր քա-

շում լուսագոյն գիւղացիների սրտերը գրաւելու : Բայց նա հասկանում էր , որ հիմնաւոր բարօրութեան կարելի է հասնել միայն մանուկներին առաւել լաւ կրթութիւն տալով : Այս պատճառով նորա գլխաւոր հոգսը ուսումնարանը դարձաւ :

— Եթէ կամենում էք օրինակելի ուսումնարան տեսնելու , — ասաց մի անգամ Մայիէրն Արնէրին , գնացէք Գէրարուդի մօտ տեսէք թէ ինչպէս է վարվում նա մանուկների հետ :

Եւ երեքն եւս — Արնէր , քահանան եւ Գլիւլֆին , Մայիէրի խօսքի վերա զարմացած , մի օր առաւօտ Գէրարուդի մօտ գնացին :

Վերջին ժամանակ Գէրարուդի տանը շատ բան բարեփոխուեցաւ այն պատճառով , որ Լինհարդն այժմ եռանդով էր աշխատում եւ իր բոլոր վաստակը տուն էր բերում : Նա բոլորովին փոխվեցաւ այն օրից , երբ Հումմէլին իր պարտքը վճարեց : Նա իւր բոլոր ազատ ժամանակը իր կնոջ եւ զաւակների հետ էր անցկացնում , նոցա հետ միասին տնային շատ գործեր էր կատարում , նոցա հետ աղօթում էր եւ աշխատելիս ուրախ երգում էր , թէպէտ իր օգնականները , որ նա լուսագոյն մշակներից չէր ընտրել , այլ արքայատներից , շատ անգամ բարկացնում էին նորա երբեմն ակամայ եւ երբեմն դիտմամբ , նորա բարօրութեանց նախանձեղով :

Իսկ մանուկները մեծ ուրախութիւն էին պատճառում Լինհարդին , մանուտանդ մեծ որդին Նիկլան , որին նա փոքր առ փոքր իր արուեստի

հետ ընտելացնում էր: Ամեն երեկոյ նա մի բան ցոյց էր տալիս նորան, մի գործ էր տալիս, հետն հաշիւներ անում թէ որքան աղիւս, կու եւ աւազ կգնայ այս ինչ բարձրութեամբ եւ հաստութեամբ պատի համար եւ այլն: Նիկլտսը չատ էր պարծենում հօր հետ պարապելով, եւ նորա ուրախութեանը չափ չկար, երբ Լինհարդ նորա համար քանի մի գործիքներ եւ կաշեայ գուգնոց գնեց:

Նիկլտան երկար գողնոցը կապած, յետ ու առաջ էր շրջում սենեակի մէջ եւ չէր կամենում հանել:

Լինհարդն եւ Գէրարուդն ուրախանում էին, երեխայի այս յափշտակութիւնը տեսնելով:

— Միայն թէ ես սպրէի մինչեւ այն ժամանակ, որ տեսնեմ նորան ինձանից աւելի հմուտ վարպետ դարձած վերադառնալիս արտասահմանից, ուր պիտի գնայ սովորելու — ասաց Լինհարդը:

— Աստուած ողորմած է, դու դեռ երկար կապրիս, մինչեւ որ մեր բոլոր երեխաները կմեծանան, պատասխանեց Գէրարուդը, նորա ձեռք սեղմելով: Այժմ փառք Աստուծուն, մենք կարող ենք մի բան յետ ձգել, եւ մեր երեխաներն եւս կարօտութիւն չեն քաշի:

— Այո, փառք Աստուծուն, ես դեռ երբէք այնքան բազդաւոր չեմ եղել, ինչպէս այժմ, երբ Հունմէլից եւ նորա պանդոկից ձեռք վերցրի:

Գէրարուդը Բուզիի զուակներին դրեթէ նոյնչափ խնամում էր, որքան իր զուակներին: Նոցա սովորում էր նոյնպէս աշխատել, մաքրութիւն

եւ կարգ սիրել: Բայց այն մանուկներն աշխատելու սովոր չլինելով ամբողջ օրերը փողոցում վազվզել սիրելով, սկզբում յօժարութեամբ չէին սկսում աշխատել եւ անդադար զանգատում էին թէ յոգնած են:

Գէրարուդն նոյն իսկ Բուզիի վերա եւս հոգ էր տանում: Շատ քիչ էր պատահում, որ նա Բուզիի տունը չգնար, որ տեղ ամեն բան կարգաւորում էր եւ անօրինում: Իսկ Բուզին, տեսնելով նորա հոգատարութիւնը, ինքն եւս աշխատում էր իր անտեսական գործերը կանոնաւորել: Մինչեւ տնգամ նորա կերպարանքն եւս փոխվել էր — այժմ աւելի լաւ էր հագնւում, երեսը ածիլում, կարծես քանի մի տարով երիտասարդացել էր:

Բայց Գէրարուդն հասկանում էր, որ միայնակ Բուզիին դժուար էր ամեն բան հոգալ, եւ գիտեհարով, որ նա յօժարութեամբ կպսակվէր իր քարեկամուհու — ներկայ տանուտէր Մայիէրի քրոջ հետ, աշխատում էր այն ազդեան աւելի մտ ծանօթացնել Բուզիի մանուկների եւ անտեսութեան հետ: Գէրարուդը ցոյց տուեց նորան Բուզիի նոր կովը, որ Արնէրից ընծայ էր ստացել եւ նորա հարուստ արօտատեղին: Իսկ Բուզիի զուակներն շուտով սիրեցին իրանց նոր ծանօթ օրիորդ Մայիէրին:

ԻԶ.

Դեռ եւս վաղ առաւօտ էր, երբ երեք բարեկամները Գէրարուզի մօտ եկան եւ նորանից թոյլ տու թիւն խնդրեցին մի օր նորա տանը մնալու եւ տեսնելու թէ ինչպէս է պարսպուում մանուկների հետ :

Գէրարուզը զարմացաւ նոցա ցանկութեան վերա, բայց յօժարութեամբ թոյլ տուեց :

Բոլոր մանուկները մանելու նստան, բացի մեծ օրիորդից, որ այն միջոցին կողքի սենեակում անկողիններ էր հաւաքում :

Նախ մանուկները միասին առաւօտեան Սաղմոսն երգեցին, յետոյ նոցանից մեծն սկսեց Աստուածաշունչ կարգալ, միւսները շարունակուած էին աշխատել :

Այնուհետ Գէրարուզը սուրբ Գրքից պատմածներ էր պատմում, որոնք նոքա սովորում էին եւ առաջագոյն սովորածները կրկնում : Մեծ աղջիկը սենեակի մէջ ամեն բան տեղաւորելուց յետոյ եկաւ միւս մանուկների հետ նստաւ եւ սկսեց բանջարանոցից բերած կաղամբը ճաշի համար պատրաստել :

Մանուկներն, օտար մարդիկների ներկայութիւնից չիտթած, յաճախ նոցա վերա էին նայում աշխատելիս : Բայց մայրն այս նկատեց եւ ասաց.

— Նայեցէք, որ ձեր մանածը անհարթ կամ հաստ դուրս չկայ :

— Ոչ, մայրիկ, պատասխանեցին մանուկները,

բայց եւ այնպէս սկսեցին աւելի ուշագրութեամբ աշխատել :

Երբ Գէրարուզը նկատում էր, որ մանուկներն աշխատելիս որ եւ իցէ դժուարութեան էին հանգիստում, վեր էր կենում եւ օգնում նոցա. ինքն եւս ամբողջ ժամանակ աշխատում էր : Ճաշից առաջ այցելուները գնացին, ասելով, որ միւս օրը նորից կգան : — Ի՞նչի համար, ասաց Գէրարուզը, ոչ ապաքէն վաղիւ եւս միեւնոյնն է լինելու :

— Դորանից առաւել լաւ գովասանք չէիր կարող ասել քեզ, պատասխանեց Գլիւլֆին, միայն հաստատուն և յարատեւ գործն արժանի է ուշագրութեան — նա յաւիտենականութեանն աւելի մօտ է : Եթէ մի բան անդադար փոխվում է, նա անհատկած ոչինչ բան է :

Այս գովեստից Գէրարուզը կարմրեց : Միւս օր նոքա նորից եկան Գէրարուզի տունը եւ իրաւ գրեթէ միեւնոյն բանը տեսան, Մանուկներն Սաղմոսներ եւ երգեր էին երգում : Աստուածաշունչ էին կարդում, հաշուելու վարժութիւններ անում եւ եռանդով եւ ուրախութեամբ աշխատում : Նոքա այլ ևս հիւրերի ներկայութեանից չէին քաշվում և համարձակ խօսում էին նոցա հետ : Գէրարուզի մանուկները չմոռացան Արնէրին շնորհակալութիւն յայտնելու իրանց ընծայած դրամների համար, իսկ Բուզիի երեխաներն — կովի համար :

Արնէր, քահանան եւ Գլիւլֆին երեքն ևս հիացած մնացին մանուկների առաջադիմութեամբ այս փոքրիկ սնային ուսումնարանում : Բացի ու-

սուճնարանից Գլիւլֆիի միտքը չափազանց գրաւում էր այն, որ աւագ մանուկներն եւանդով օգնում էին կրտսերներին եւ սովորեցնում էին ինչ որ իրանք արդէն գիտէին:

Հետզհետէ խորհելով գլիւլի մէջ լուս գպրոց հաստատելու անհրաժեշտութեան մասին, Գլիւլֆիին վերջապէս որոշեց, որ ինքն ուսուցիչ դառնայ:

Արնէրն, որին նա իւր միտքն յայտնեց, չափազանց ուրախացաւ, եւ գոհ եղաւ նորանից, որովհետեւ ինքն եւս բոլորովին չգիտէր թէ ո՞ւմ պիտի յանձնէր ուսուճնարանի այս մեծ գործը: Փէրտրուզը խոստացաւ Գլիւլֆիին օգնել: Վճռեցին մի փոքր ժամանակից յետոյ նոր ուսուճնարան բանալ: Հինք փակեցին, բայց ուսուցչին իր նախկին սոճիկը յատկացրին:

Արնէրի բարի գործերն եւ մանաւանդ քաղցր եւ անկեղծ վարմունքը գլիւլացիների հետ, հետզհետէ գրաւում էին նոցա սրտերը, եւ միայն քանի մի անձներ, որոնք չէին կարողանում առաջվան պէս իրանց գրացիներին գիկել, դժգոհ էին այս նոր կարգերից:

Ի՛է.

Վերջապէս հասարակական հոգերը բաժանելու նշանակած օրն հասաւ: Արնէրն այն օրը կամենում էր գլիւլացիների համար մի որ եւ է միութարական գործով նշանաւորել, ուստի եւ հրամայեց, որ այն օր գլիւլացիներին ընծայ տալը

մի ամբողջ խուրճ նորատունի պողատու ծառեր, նոյնպէս եւ մի հօտ այծեր գլիւլի հրապարակ բերեն:

Արօտատեղն արժանաւորութեան կողմից հաւասար մասներ բաժանելուց յետոյ, նա գլիւլացիներին յանձնեց մասներն իրանց մէջ վիճակով բաժանել, իսկ ինքն սէրով նայում էր այն ուրախութեան ցոյցերին, որով վերադառնում էին տուն այժմ հօղի աէր դարձած խեղճ գլիւլացիները:

Երբ այս գործը վերջացաւ, Արնէրն իւր պարտիզականին հրամայեց, որ իւրաքանչիւր գլիւլացուն այնքան ծառ տայ, որքան որ վաւակ ունէր, եւ պատուիրեց բոլոր ծառերը անկել առանձին հողաբաժնի վերա, որ նա գլիւլացիներին էր ընծայում: Այսպէսով մի ժամանակ Բօննալի մէջ մի մեծ պողատու պարտեզ կոչանար, եւ նա յոյս ունէր, որ գլիւլացիներն երախտագիտութեամբ եւ սէրով կյիշէին իրան: Նա իր որդուն կարլոսին եւս մի մեծ ծառ ընծայեց, որը նոյնպէս այն տեղ պիտի տնկվէր:

Այս գործը վերջացրած, նա դնաց քահանայի տունը հանգստանալու:

Գլիւլի երեխաներին եւ Արնէրի որդուն աւելի այծերն էին գրաւում: Նոքա չըջապատել էին այծերին եւ նոցա խոտ եւ հաց էին ուտեցնում:

Լինհարզի որդին Նիկլատը, նոյնպէս մի այժ իր կողմը քարչեց եւ դրականից մի մեծ կտոր հաց հանելով, ցոյց էր տալիս նորան եւ կտոր կտոր անելով կերակրում էր նորան:

— Մի կտոր ինձ եւս տուր, խղճալի ձայնով
ասաց Բէտէլի, Մարկոսի աղջիկը:

— Միթէ դու չունի՞ս: Ուրախութեամբ, ահա
առ: Եւ մեծ կտոր կտրելով, Նիկլասը տուեց
աղջկան, իսկ մնացածով այծին էր կերակրում:

— Հապա ինքդ ի՞նչի չես ուտում, հարցրեց
նորան Բէտէլի:

— Մայրիկս դարձեալ կտայ ինձ:

— Մայրիկդ մի՞թէ տալիս է, որքան կամե-
նում ես:

— Այո, մեզ այժմ շատ է տալիս: Բայց փոքր
ինչ առաջ շատ անգամ ուտելու հաց չէինք ու-
նենում:

Աղջիկն հտառչեց:

— Գիտես ինչ, վեց ժամին եկ մեր փողոցը,
ես քեզ դարձեալ բան կը բերեմ:

— Բայց քեզ քիչ կ'մնայ:

— Ոչինչ, այդ իմ գործս է: Այս ասելով, Նիկ-
լասը ցած թռաւ ցանկապատից, որի վերա նըս-
տած էր, եւ գնաց միւս մանուկների մօտ, իսկ
Բէտէլին սկսեց իր հացն ուտել:

Արնէրի նախկին սպասաւոր կլաուսը, դեռ եւս
հրապարակի մէջ էր, այս բոլորը տեսաւ եւ մա-
նուկների խօսակցութիւնը լսեց: Մի մեծ կտոր
հաց եւս նա ձգեց Բէտէլիի գողը: Աղջիկը վա-
խից վեր թռաւ, բայց երբ բանն իմացաւ, սըր-
տանց շնորհակալութիւն արեց կլաուսից եւ վա-
զեց Նիկլասի մօտ:

Այժմ հերթը Բէտէլիին հասաւ այծին կերակ-
րելու, բայց շատ մօնր կտորներով, եւ Նիկլասին

համոզեց, որ մի կտորն եւս նա վերցնէ:

Այն միջոցին Գլիւլֆին եկաւ եւ Արնէրի կող-
մից այծերն առաւել աղքատագոյն գիւղացիներին
բաժանեց այն պայմանով, որ երախաներն
իրանք պահեն եւ արածեն նոցա: Իսկ այն գիւ-
ղացիներն, որոնք որեւէ միջոցներ ունէին, իրանց
զաւակների համար իրանք փողով գնեցին այծեր:
Կարլոսն եւս մի այժ ստացաւ: Այնուհետեւ բո-
լոր մանուկները գնացք կազմեցին իւրաքանչիւրն
իր այժն առած զոյգ զոյգ գնումէին առաջ:

— Հապա ո՞վ կ'լինի ձեզ առաջնորդ, հարցրեց
Գլիւլֆին, մի փայտի ծայրից թաշկինակ կապե-
լով իրրեւ դրոշակ:

— Կարլոս, Կարլոս, գոչեցին մանուկները:
Կարլոսն առաջ անցաւ:

— Ոչ, Կարլոս չէ, այլ ահա այս երեխան,
ասաց կլաուսը, Լինհարդի որդուն ցոյց տալով:

— Ի՞նչի, հարցրեց Կարլոսը, փոքր ինչ վի-
րաւորված:

Բայց երբ կլաուսը Գլիւլֆիին ստամեց ինչ որ
տեսել էր, Կարլոսն ինքն հանդիսաւոր կերպով
դրոշակը Նիկլասին յանձնեց: Եւ ուրախ երգեր
երգելով պարտէզ լինելու նշանակուած տեղը
գնացին:

ԻԸ.

Այն միջոցին Արնէրն մտածմունքի մէջ նստած
էր քահանայի պարտէզում: Նորա մտքերը սերախ
չէին: Նա գիտէր թէ որքան դժուար է նորա

ձեռնարկած գիւղի բարւոքման գործը, եւ հասկանումէր, որ եթէ մի սխալ քայլ կամ օգնականի անյաջող ընտրութիւն անէր, բոլոր գործը կիսանգարովէր: Նա գիտէր նոյնպէս, որ հարուստ գիւղացիներն առաջվան պէս հակառակ էին իրան եւ աշխատում էին վնասել նորա գործին: Բայց նա եւս վճռել էր հաստատապէս իր ձեռնարկած գործը գլուխ բերելու մինչեւ վերջին շունչն աշխատէ:

Արնէրն աչքերը բարձրացրեց եւ յանկարծ տեսաւ իր առաջ մի խումբ աղջիկներ սիրուն շորեր հագած եւ ամենքի առաջ մի օրիորդ սպիտակ շոր հագած, գլխին մի պսակ եւ գեղեցիկ իրբեւ հրեշտակ:

Նորան թուում էր թէ երազ էր տեսնում: Բայց ահա օրիորդն սկսեց խօսել. նա Արնէրին հայր էր կոչում եւ շնորհակալութիւն մատուցանում այն ամեն բանի համար, ինչ որ արել էր գիւղի եւ իրանց համար:

Արնէրի սիրտը շատ շարժվեցաւ: Նա քաղցրութեամբ ողջունեց մանուկներին, փոքրիկներին իր ծունկն առաւ եւ հարցրեց թէ ո՞վ էր այս բանը մտածել: Երեւեցաւ, որ սա Գէրտուդի եւ Մարէյլի միաք է եղել, որոնք զարդարել էին օրիորդներին իրանց ամենալաւ շորերով եւ սովորեցրել էին թէ ինչ պիտի ասէին պարոնին:

Արնէր գնաց քահանայի մօտ եւ նորա կնոջից խնդրեց, որ մանուկներին մի բանով հիւրասիրէ: Բարեսիրտ կինն ուրախութեամբ սկսեց կարգադրել եւ շուտով պարտեզի մէջ սեղան պատ-

րաստվեցաւ, որի վերա շարված էին շատ սպիտակ հացեր եւ կաթնապուր:

Միեւնոյն միջոցին պարտեզի տեղը գնացող երեխաներն, Արնէրին սպասելուց ձանձրանալով, եկան նորա մօտ եւ իրանք եւս հիւրասիրութեան մասնակից եղան:

Մի փառաւոր խնջոյք եղաւ, եւ մանուկներն հաւատացնում էին, որ երբէք այնպիսի հաց եւ կաթնապուր կերած չէին: Խնջոյքի տաքացած ժամին եկաւ Թէրեզան իր փոքր մանուկների հետ եւ ինքն եւս հիւրասիրութեան մասնակցեց: Երբ բոլորը մինչեւ վերջին կտորը կերան, ամենքը խմբով դաշտ գնացին եւ հանդիսաւոր կերպով ծառերը անկեցին:

Չնայելով, որ այն օրն Արնէրի համար ուրախալի էր, սակայն բոլոր ժամանակ կարծես չարագուշակ մի նախազգացումն էր նորան ճնշում: Եւ իրաւ այն նախազգացումն շուտով կատարվեցաւ:

ԻԹ.

Արօտատեղն հանդիսաւոր կերպով բաժանելուց փոքր ինչ յետոյ պատահեց հետեւեալ ինքն ըստ ինքեան աննշան դէպքը, սակայն հետեւանքներն Արնէրի համար բաւական նեղութիւններ պատճառեցին:

Արնէրի գիւղում սպրում էր մի աղջիկ Էյլիսներեզէր ազգանունով: Նա գիւղացու աղջիկ էր, բայց ծնօգները հարստանալով կամեցել էին ի-

րանց աղջիկան մարդ դարձնել եւ մի փոքր ժամանակ նորան գիշերօթիկ վարժարան էին տուել: Այնտեղ նա սովորել էր այն, ինչոր պէտք չէր իրան, եւ մուացել էր գիւղական կեանքը եւ պարապմունքը: Նա սկսեց իրան ամենքից բարձր դասել, պարծենում էր, որ կարող էր առանց աշխատութեան ապրել եւ բամբասանքն իր մշտական գործ էր շինել: Դժբաղքարար այն աղջիկը ծանօթացաւ Արնէրի մի ազգականուհի Սիլվիայի հետ: Սիլվիան Արնէրի հօրեղբօր աղջիկն էր եւ ապրում էր իր եւ Արնէրի միւս հօրեղբօր մօտ, որ շատ հարուստ եւ պատուաւոր գէնէրալ էր: Սիլվիան առում էր Արնէրին նորա համար, որ հօրեղբայրը Արնէրին իբրեւ իր ժառանգին էր նայում: Իսկ Սիլվիան կամենում էր, որ հօրեղբօր կարողութիւնն իրան մնար եւ ամեն հնար գործ էր դնում իր նպատակին հասնելու համար: Նա ամեն կերպով աշխատում էր հաճոյանալ ծերունի հօրեղբօրն եւ նորա աչքում Արնէրին ստորացնել: Եւ Արնէրի գիւղում պատահած ամեն բանի մասին մանրամասն տեղեկութիւններ ունենալու համար, նա էյիսէնրէրգէրին ընդունում էր իր տանը եւ հարցումփորձ անելով ամեն բան իմանում էր Արնէրի մասին: Պառաւած օրիորդը շատ լաւ էր հասկանում թէ ի՞նչ էին կամենում իրանից իմանալ, և չէր խնայում ոչ պարոնին, ոչ տիկնոջը: Բայց Սիլվիան մինչեւ այժմ մի այնպիսի բան չէր կարողացել հաղորդել Արնէրի վարմունքի մասին, որ չհաւանէր Գէնէրալը: Այժմ երբ Արնէրն սկսեց գիւզի վերա հոգ

տանել, արդէն առիթ կար, և Սիլվիան աշխատում էր իր հօրեղբօրորդու ամեն մի գործը իբրեւ դէպի կործանումն եւ սնանկութիւն տանող յիմարութիւն բացատրել, իսկ Հուսմէի մասին արած դատաստանն իբրեւ մի աւելորդ խնստասրտութիւն: Զօրապետն յերաւի վրդովեցաւ այս լուրերն իմանալով:

Միեւնոյն միջոցին օրիորդ էյիսէնրէրգէր կամենում էր մի կերպով Արնէրի տանն եւս ել եւ մուտ ունենալ: Նա կարծում էր, որ եթէ Արնէր բարեկամարար խօսում է Գէրտուզի հետ, իրան դրկաբաց պիտի ընդունէր, եւ ահա մի օր աւաւօտ ամբողջ գնաց: Արնէր վազուց ձանձրացել էր այսպիսի այցելութիւններից: Այն օրից, որ մօտեցել էր գիւղացիներին եւ ամանց օգնել, շատերը կարծել էին թէ հեշտութեամբ կարող էին նորանից օգուտ քաղել, եւ անդադար նորան լուրեր եւ բամբասանքներ էին հասցնում: Արնէր վճռել էր իր մօտ այսպիսի գործով առաջին եկողին լաւ դատ տալ, եւ իսկ այդ առաւօտն եկաւ էյիսէնրէրգէր, որի մասին Արնէրն արդէն շատ բան էր լսել:

Նա սկսեց Արնէրին անհամար բամբասանքներ հաղորդել այն անձների մասին, որոնց Արնէրն շատ էր յարգում եւ սիրում, եւ այս բանը բուրդովին զայրացրեց նորան: Նա երկար լսում էր բամբասող օրիորդին, աչքերը վերան յառած: Եւ երբ վերջապէս նա լսեց, Արնէր կանչեց պահապանին եւ հրամայեց, որ օրիորդին ձանապարհ դնէ, տանէ իր տունը:

Օրիորդը շատ վախեցաւ եւ Արնէրի առաջ չօքած խնդրում էր, որ իրան այս խայտառակութիւնից ազատէ: Բարեբաղդարար Թէրէզան, հիւրասենեակի մօտով անցնելիս այն տեսարանը տեսաւ եւ իր ամուսնին համոզեց, որ թողնէ պառաւ բամբաստանքին ազատ տուն գնայ:

Էյսէնրէրդէր տուն վերադարձած չգիտէր կատաղութենից ինչ անէր: Անմիջապէս նամակ գրեց Սիլվիային իրան պատահածը մի առ մի պատմելով, ի հարկէ հարկաւոր չափազանցութիւններով:

Սիլվիային շատ ձեռնտու էր այսպիսի նամակը: Նա նամակը զօրապետին ցոյց տուեց սրպէս Արնէրի նոր յիմարութեան եւ խտտարտութեան ապացոյց, ասելով որ Արնէր ամեն ապաշնորհներին լրում է եւ արժանաւոր անձներին խայտառակութեամբ դուրս է անում:

Զօրապետը վճռեց քանի մի շարքից անձամբ գնալ Արնէրի մօտ եւ նորա անզգոյշ վարմունքից զգուշացնել: Այս բանը Սելվիայի խորհրդին յարմար էր. — նա յոյս ունէր այնտեղ բոլորովին համոզելու իր հօրեղբորն ինչոր կամենում էր, իսկ առ այժմ իր բարեկամուհուն գրեց, որ նա աշխատէ զանազան անբաւականութիւններ պատճառել Արնէրին եւ նորա ամեն մի գործը խանգարել:

Էյսէնրէրդէրն եւս իր լեզուն չէր խնայում:

L.

Այժմ Գլիւլֆիի, Արնէրի եւ քահանայի մտքերն ամբողջապէս դարոյցին էին նուիրված, եւ նորա բացման օրը նշանակված էր արդէն: Բացման նախընթաց օրը, որ կիրակի էր, քահանան քարոզ ասաց եկեղեցում թէ ինչ օգուտ կարող է տալ լաւ դարոյցը եւ թէ բոլոր ծնօղները պարտական են նոր ուսուցչին օգնել: Յետոյ Արնէրն Գլիւլֆիին հանդիսաւոր կերպով ներկայացրեց հասարակութեանը սրպէս նոր ուսուցիչ, եւ բոլոր մանուկներին քահանայի տունը հրաւիրեց:

Մանուկներն այնտեղ ամբողջ օրն ուրախ խաղում էին եւ երգում, եւ ասուն գնալիս նոցանից իւրաքանչիւրը, ինչպէս զատկին, երկու կարմիր ձու, մի հաց եւ մի ծաղկափունջ ստացաւ:

Միւս օրը ուսումնարանը բացվեցաւ: Բայց սկզբում գործը դանդաղ էր ընթանում: մանուկները շփոթվում էին եւ չէին պատասխանում, իսկ իրանց գիտեցածն եւս շատ վատ էին սովորել: օրինակ, նոքա չէին հասկանում այն ազօթքներն, որոնք թութակի պէս անգիր սերտել էին, մինչեւ անգամ սրբազան պատմութիւն եւս չէին հասկանում եւ անգիր էին սերտել: Բայց Գլիւլֆին իր քաղցր վարմունքով հետզհետէ այնպէս արեց, որ մանուկներն սկսեցին աւելի պարզ եւ համարձակ կերպով վարվել նորա հետ: իսկ որոնք սկզբում չէին սիրում Գլիւլֆիին, շուտով սրտանց սիրեցին նորան: Մանուկների հետ

նոցա ծնօղներն եւս մօտեցան նորան : Այնուհետեւ ուսումն եւս արագ քայլերով առաջ գնաց :

Գլխւլֆին իր աշակերտներին ոչ միայն կարգաւ գրեւ եւ համարեւ էր սովորեցնում, այլեւ այնպիսի զանազան աշխատութիւններ, որոնք ապագայում կարող էին պէտք գալ մանուկներին : Սորա համար նա մի կնոջ հրաւիրեց, որը շատ լաւ գիտէր ամեն տեսակ ձեռագործութիւն, մանուկներին սովորեցնում էր մանեւ, գործեւ, կարել եւայլն : Այլ եւ ինքն Գլխւլֆին աշակերտներին հետ դրացիների զանազան գործարաններ էր գնում, որ տեղ նոքա նայում էին աշխատութիւններին եւ իրանց կարողութեան չափ մասնակից էին լինում :

Սորա հետեւանքը շուտով երեւցաւ : Այն մանուկներն, որոնք առաջ մի բան անել չգիտէին, շուտով տան մէջ պիտանի օգնականներ դարձան, իսկ Բօննալում վաղուց սալրող ժամագործը որ ոչ մի աշակերտ չէր ընդունում, այժմ ձրիապէս երկու աշակերտ վերչրեց :

Գլխւլֆին առանձին ուշք դարձրեց սրբազան պատմութեանն եւ երգեցողութեանը : Ատուածաշունչն աւանդելիս նորան քահանան էր օգնում, իսկ երգեցողութեան մէջ իր կիսնն եւ Թէրէզան :

Բայց միայն սորանով չէր սահմանափակվում Գլխւլֆին գործունէութիւնը, նա մանուկների միջոցով խմանում էր գիւղացիների անային գործերը, օգնում էր մինին խորհրդով, միւսին գործով, երրորդին Արնէրի մօտ էր ուղարկում :

այլ եւ մանուկների հետ հիւանդներին այցելութիւն էր անում եւ աշակերտների ձեռով նոցա դեղեր ուղարկում — մի խօսքով որքան ոյժն հասնում էր աշխատում էր իւրաքանչիւրին օգնել :

Շուտով գիւղում շատ քիչ էին լավում Գլխւլֆին, Արնէրի եւ քահանայի դէմ բողոքներ, — ընդհակառակն գրեթէ ամենքն սկսեցին պարզ եւ անկեղծ վարվել նոցա հետ : Միեւնոյն ժամանակ գիւղացիների կեանքն եւս նկատելի կերպով բարւոքվեցաւ :

ԼԱ.

Արնէրի գործունէութեան լուրը շատ հեռու տարածվեցաւ եւ նոյն իսկ դուքսի ականջն հասաւ : Դուքսը շատ համակրում էր Արնէրին, բայց նորա պալատականները չէին հաւանում Արնէրի վարմունքը, եւ Սիլվիան սորանից օգուտ քաղեց ծեր զօրապետին Արնէրի դէմ գրգռելու կամ գոնէ Արնէրին նորա աչքում ծիծաղելի ներկայացնելու : Վերջապէս զօրապետը Արնէրի գնալու օրը նշանակեց, որ անձամբ տեսնէր թէ ի՞նչ էր անում իր եղբորորդին :

Սիլվիան իր հօրեղբորորդու մօտ գնալուն պէս ամենքին արդէն մի տհաճութիւն պատճառեց եւ ծառաներին մինչեւ անգամ իր դէմ գրգռեց : Փոքրիկ Կարլոսին եւս հանգիստ չէր թողնում, անդադար ծաղրում էր նորան, նորա պարապմունքը պարտէզում, նորա խաղերը, իսկ իր հօրեղբորն կրկնում էր թէ Արնէրն իր որդուն ազ-

նուսկանին վայել կերպով չէ կրթում, եւ թոյլ է տալիս նորան գիւղացի մանչերի հետ բարեկամանալ: Նա Գլիւլֆիին եւս դադար չէր տալիս եւ նորան այն աստիճանին հասցրեց վերջապէս, որ նա, քանի Սիլվիան ամրոցին մէջ էր, քահանայի տունը փոխադրվեցաւ: Սիլվիան ամեն մի մանր բանի համար Արնէրին կամ Թէրէզային անհանգիստ էր անում եւ զօրապետի ուշք էր դարձնում ամեն հանգամանքին, մեկնելով միշտ ի վրաս Արնէրի:

Թէպէտ ծերունին տեսնումէր, որ Արնէրն ոչինչ այնպիսի բան չէր անում, որ ազնուականին անվայել լինէր, բայց Սիլվիայի անդադար նկատողութիւնները գրգռում էին նորան, եւ նա փոքր առ փոքր ինքն եւս սկսեց այլապէս վարվել իր եղբորորդու հետ: Մանաւանդ նա նեղանումէր նորա համար, որ Արնէրի մօտ անդադար գիւղացիներ էին գալիս զանազան գործերի համար եւ Արնէրն իրանց թողնելով նոցա մօտ էր գնում:

Սիլվիան աշխատումէր գիւղացիներին եւս գրգռել: Նա իրանց որսպանի միջոցով գիւղի մէջ լուրեր էր տարածում, իբր թէ Արնէրի նպատակը ոչ թէ գիւղացիների, հապա իր սեփական օգուտըն է եւ այլն: Այս որսպանն ճանաչում էր առաջ Գլիւլֆիին եւ գիտէր, որ նա մեծ կարողութիւն չունէր: Սիլվիան ստրանից օգուտ քաղելով որսպանին հրամայեց, որ գիւղի մէջ ամենքին պատմէ իբր թէ Գլիւլֆիին առաջ ամրոցից ամրոց թափառական անձն է եղել եւ զանազան

պարոնների հացով էր ապրում ճրի, թէ միակ նորա ցանկութիւնն է որքան կարելի է շատ փող ձեռք բերել եւ թէ փողի համար ամեն բան պատրաստ է անելու:

Երկու օր չէր անցել, որ Բօննալում ամենքը գիտէին այս, եւ թէպէտ ոչ ոք չէր հաւատում, բայց ամենքն յօժարութեամբ հաղորդում էին միմեանց այս բամբասանքը. մինչեւ անգամ մանուկներն եւս իմացան այս:

Այսպէս էր գնում գործը զօրապետի եւ Սիլվիայի եկած օրից եւ օրէցօր վատանում էր: Զօրապետն հետզհետէ բարկանում էր, իսկ Արնէրն որ առաջ եւս շատ առողջ չէր, այնքան վրդովվում էր, որ հիւանդանալու մօտ էր, իսկ փոքրիկ Կարլոսը շատ անգամ մօրից հարցնում էր թէ արդե՞օք նոքա չուտով պիտի գնան:

Գործը այսպէս չէր կարող շարունակվել եւ իրաւ կնճիւղը շուտ լուծվեցաւ:

ԼԲ.

Մի անգամ, մի տաք օր, ճաշից յետոյ զօրապետը Սիլվիայի հետ դուրս էր եկել զօվանալու պաաչգամբ, իսկ Արնէրի մօտ քանի մի հիւրեր կային: Այս միջոցին ամրոցին մօտեցաւ Միքէլ, քահանայից նամակ բերելով Արնէրին: Ամենքից առաջ Սիլվիան նկատեց նորան եւ զօրապետին ասաց:

— Ահա տեսէք, եղբայրս, այս բոպէիս մեզ ամենքիս կթողնէ եւ նորա մօտ կգնայ:

Մերունու գլուխը փոքր ինչ տաքացել էր ճաշի վերա եւ նա Միքէլի վերա գոչեց .

— Կորիր այստեղից :

Բայց Միքէլը մի կողմ քաշվեցաւ եւ սպասում էր :

— Ահա տեսնում էք, մինչեւ անգամ ձեզ եւս չեն լսում, ասաց Սիլվիան :

— Շներով դուրս արէք նորան — ձայն տուեց զօրապետն որսպանին, եւ ինքն տուն ներս մտաւ :

Որսպանը բաց չթողեց շներին, լաւ հասկանալով, որ զօրապետը տաքացած ժամին էր տուել այս պատուէրը : Բայց Սիլվիան հրամայեց նորան, որ շներին անմիջապէս արձակէ Միքէլի վերա :

Կարուս տեսաւ, որ որսպանը շներին արձակում է, եւ մի բուպէում որսպանը շներին գիւղացու վերա էր գրգռում : Այն ժամանակ Կարլոսն իր անձն մոռացած շների ետեւից ընկաւ, բռնեց մինին — վզնոցից եւ ամենայն ուժգնութեամբ յետ էր կանչում միւսին, բայց միւս շունը չէր լսում :

— Ի՞նչես վախենում, յիմար մանչ, շունը ուտելու չէ նորան . պատշգամբից գոչեց Սիլվիան :

Արդարեւ շունը Միքէլին չէր ուտի եւ մինչեւ անգամ չէր կծի, այլ միայն շորերը կպատառոտէր, — բայց Միքէլն այդ չգիտէր, սկսեց պաշտպանվել եւ շանը սաստիկ խփեց : Շունը կատաղեց եւ բռնեց ատամներով նորա ազգրը կծեց : Միքէլն կրկին խփեց նորան այնպէս, որ շունը ճչեց եւ դէպի առուակը վազեց :

— Սպասիր, գեռ շունը այնտեղից կվերադառնայ, գոչեց Սիլվիան պատշգամբից :

— Դու ինքդ սպասիր, անիծված, գոչեց Միքէլը զայրացած :

Բայց Կարլոսը արդէն նորա մտան էր :

— Բաւ է, բաւ է, կրկնում էր Կարլոսը, Թող դորան : Գնանք ինձ հետ, — եւ նորա շորից բռնած քաշում էր նորան իր հետ :

Կարլոսը ներս տարաւ նորան եւ ասաց .

— Հայրիկա այստեղ մեղք չունի : Նա քեզ կօգնէ :

— Գիտեմ, որ հայրիկդ մեղք չունի, նորա համար ես պատրաստ եմ մեռնել :

— Բայց դու չես մեռնի՞, վախեցած հարցրեց Կարլոսը, նայելով նորա վէրքին, որից առատ արիւն էր հոսում — դու չե՞ս մեռնի՞, այնպէս չէ

— Ոչ, ոչ, հանգստացիր :

Բայց երբ սենեակը ներս մտան, Միքէլը Կարլոսին ուղարկեց Կլաուսին կանչելու, զգում էր, որ շատ արիւն գնալուց ոյժից ընկնում էր :

Երեխան վազեց եւ բաւական երկար ժամանակ որոնում էր Կլաուսին :

Իսկ Սիլվիան հանգիստ մտաւ սենեակը եւ սկսեց մասնակցել ներսը գտնվողների զրոյցներին : Յանկարծ ներս մտաւ հիւրասենեակը Կարլոսը, շունչը բռնված, մազերը խառնված, շորերն եւ երեսն արիւնաշաղախ :

Թէրէզան զգալով, որ մի դժբաղտութիւն պատահած է, վերկացաւ սեղանից :

— Այս բոլորն անողը նա է, նա է մեղաւորը, աղաղակեց Կարլոսը Սիլվիային ցոյց տալով :

— Ի՞նչ է պատահել, հարցրին ամենքը միաբերան :

— Ոչինչ, չնչին բան. — պատասխանեց Սիրվիանը,
— շունը փոքր ինչ ճանկութեւ է գիւղացուն: Նա
արդէն գնաց:

Դեռ Սիրվիան հազիւ իր խօսքը վերջացրեց,
որ ներս մտաւ տնտեսուհին եւ յայտնեց, որ
Միքէլը մեռած ընկած է նախասենեակում:

Այս խօսքը բոլորովին չփոթեցրեց ամենքին.
Արնէրը դէպի նախասենեակ վազեց, չնկատելով,
որ սփռուցը իր հետ էր քարշել եւ բոլոր ձենա-
պակեղէններն եւ բլբլերները վայր թափվեցան
եւ կտոր կտոր եղան: Թէրէզան եւս առանց շուրջ
նայելու, վազեց նորա ետեւից:

Բարեբաղդաբար լուրը սխալ դուրս եկաւ:
Միքէլը արիւնհանութենից միայն ուշաթափ էր
եղել եւ քանի մի րոպէից յետոյ սթափվեցաւ:
Նորա սիրտը շատ շարժվեցաւ, տեսնելով իր մօտ
Արնէրին եւ Թէրէզային եւ չլսելով նոցա ներո-
ղութիւն խնդրելն ինքն շնորհակալութիւն էր
յայտնում կարեկցութեան համար: Նա նոցա
պատմեց կարլոսի վարմունքը թէ ինչպէս կանգ-
նեցրեց շանը, ինչպէս իրան տուն բերեց: Ծնող-
ներն ուրախութեան արտասուքով գրկեցին եւ
համբուրեցին իրանց որդուն:

— Միշտ այդպէս վարվիր, — ասաց նորան
հայրը: Երբ Միքէլը փոքր ինչ կազդուրվեցաւ եւ
վերքը կապեցին, Արնէր հրամայեց, որ նորան
պատգարակով տուն տանին, որովհետեւ Միքէլը
ամրոցում չէր կամենում մնալ: Բայց Միքէլը չմո-
ռացաւ քահանայի նամակը Արնէրին տալ: Նա-
մակը բոլորովին արիւնաշաղախ էր եղել:

ԼԳ.

Արնէր դեռ եւս չհանգստացած սկսեց նամակը
կարդալ, բայց նամակն աւելի մեծացրեց նորա
վրդովմունքը. քահանան նամակի մէջ նորան հա-
ղորդում էր այն լուրերը, որոնք Սիրվիան որս-
պանի միջոցով տարածում էր Արնէրի եւ Գլիւլ-
ֆիի մասին, եւ թէ ինչ ազդեցութիւն են անում
գիւղացիների վերա այն լուրերը: Նա գրում էր,
որ նոր կարգերն դեռ շատ նոր են լուծված, եւ
հին կարգերը դեռ եւս կենդանի են ամենքի
մտքում եւ թէ այն գիւղացիներն, որոնք առաջ-
վան պէս այժմ իրանց համագիւղացիներին կե-
ղեքել չեն կարողանում, շատ ուրախ կլինէին,
որ հին կարգերը վերագառնային: Նա նոյնպէս
գրում էր, թէ Գլիւլֆիի մասին պատմածներն
աշակերանների ականջին եւս հասել են եւ թէ
Գէրարդը, լսելով, որ իր կիցիւն մի բանբա-
սանք էր հաղորդել մի երեսային, ճիպտը բե-
րելով ուսումնարան, աղջկանն այնպիսի ձեծ է
տուել, որ հազիւ թէ աղջիկն երբէք այն մտա-
նայ եւ այսպիսի ուրիշ բաներ:

Այս նամակը բոլորովին դայրացրեց Արնէրին,
եւ Թէրէզան նորան այսպէս յուզված տեսնելով
համոզեց նորան, որ գնա պառկէ եւ ընթրելու
սեղանատուն չգայ: Բայց Արնէրն երկար ժամա-
նակ չէր կարողանում հանգստանալ: Կարլոսը,
կողքի սենեակում պառկած, լսեց Արնէրի այս
խօսքը:

— Նոքա ինձ գերեզման կիջեցնեն:

Խեղճ մանուկն երեսը բարձի մէջ դրած ամբողջ
գիշերը լացեց :

Միւս օրն Արնէրն սաստիկ տենդով հիւանդա-
ցաւ :

Հետեւեալ օրն զօրապետը երկար չէր կարո-
ղանում մտաբերել թէ ի՞նչ էր պատահել նա-
խընթաց օրը . նորան երբեմն թուում էր թէ
գիւղացին մեռել է, երբեմն թէ մեռած չէ, եր-
բեմն թուում էր թէ ամեն բանում մեղաւորը
Սիլվիան է եւ երբեմն թէ մեղաւորն ինքն է :

Զօրապետը, տեսնելով, որ կլաուսն իր սեն-
եակի մօտով է անցնում, կանչեց նորան, բայց
կլաուսը պատասխանեց, թէ պարոնն հիւտեղ է
եւ ինքն շտապում է :

— Ուրեմն երբ ազատ կլինիս, եկ, — ասաց
զօրապետը :

Արնէրի հիւանդութեան լուրը զօրապետին
բոլորովին չփոթեցրեց :

Երբ կլաուսն եկաւ, զօրապետն սկսեց նորան
հարցուփորձ անել թէ ինչպէս էր պատահել, որ
չներին գիւղացու վերա էին արձակել, կլաուսը
պատմեց ինչպէս որ եղել էր, եւ աւելացրեց,
որ առանց Սիլվիայի հրամանի որսպանը չներին
չէր արձակի :

— Ուրեմն չատերը գիտե՞ն, որ Սիլվիան է
մեղաւորը :

— Բոլոր ծառաները գիտեն :

— Ի՞նչ են ասում :

Կլաուսը լուռ էր :

— Ասա ի՞նչ են ասում :

— Ասում են որ անօրէնութիւն էր արածը եւ
թէ սորա համար նա իր պատիժն այս կեանքում
դեռ կստանայ :

Զօրապետը լռեց :

— Իսկ Միքէլը, — Փառք Աստուծուն, որ կեն-
դանի է . ասաց զօրապետը :

— Այո, փառք Աստուծուն, մանաւանդ օրիոր-
դի համար :

— Ինչպէ՞ս թէ օրիորդի համար, ասաց զօրապետը :

— Գիւղացիները հեշտութեամբ չեն ներում, երբ
իրանցից մինին մինչեւ սպանելը չներին են մատնում :

— Մի՞թէ գիւղացիներն եւս գիտեն :

— Նոքա բազմութեամբ դիմաւորեցին Միքէլի
պատգարակին :

— Բայց այժմ ոչ ոք ձեռք տալու չէ՞ Սիլվիային :

— Կարծում եմ թէ ոչ, բայց խորհուրդ չէի
տայ օրիորդին տնից հեռու գնալ միայնակ :

— Տէր Աստուած, Տէր Աստուած :

— Այն ժամանակ կլաուսը չկարողացաւ իրան զսպել
եւ պատմեց թէ ինչպէս օրիորդն աշխատում է
ամենքին նեղութիւն պատճառել, թէ ինչպէս մին-
չեւ անգամ ամենքին սիրելի փոքրիկ կարլոսին հա-
լածում է եւ թէ ինչպէս ամենքն ատում են նորան :

Զօրապետը շատ յուզվեցաւ եւ տխրեց, այս
ամենն լսելով : Նա կլաուսին պատուիրեց, որ
գինի եւ նպարեղէն գնէ, Միքէլին տանէ իր
կողմից եւ ներողութիւն խնդրէ :

Իսկ երբ Սիլվիան զօրապետի մօտ եկաւ շատ
սառն ընդունեց նորան եւ միայն զգուշացրեց,
որ միայնակ ամբողջից հեռու չգնայ :

Բայց Սիլվիան արգէն մտածել էր թէ ինչ պիտի անէր: Նա կարգացել էր քահանայի Սրնէրին գրած նամակը եւ կամենում էր օգուտ քաղել այն հանգամանքից, որ զիւղացիներէն ոմանք ցաւում էին հին կարգերի մասին: Նա կամենում էր նոյնպէս Լինհարդի Լիզէլին տեսնել եւ նորան Գէրտրուզի գէմ գրգռել:

ԼԴ.

— Ես այսօր ճաշելու չեմ գայ: Թող սոված մեռնիմ, բայց սեղանատուն չեմ գայ մինչեւ նոքա այտեղից չեն գնայ: Նոքա դժբաղտութիւն բերին մեր տունը եւ դեռ հայրիկիս գերեզման կհասցնեն — այսպէս էր ասում այն աւաւօտ փոքրիկ կարլան իր մօրը:

— Ի՞նչ ես ասում, սիրելիս, այդպէս պիտի չխօսես: Հայրիկից կառողջանայ, իսկ հօրեղբայրդ հայրիկին սիրում է:

— Դու չգիտես թէ ինչ էր ասում հայրիկս:

— Ի՞նչ էր ասում, ցած ձայնով հարցրեց Թէրէզան:

— Ես չէի կամենում ասել, բայց այժմ պէտք է տեսնեմ... Երեկ հայրիկն անկողնում պառկած ասում էր: «Նոքա ինձ գերեզման կիջեցնեն»: Դու, մայրիկ, հետո էիր եւ չլսեցիր, իսկ յետոյ ես ամբողջ գիշեր լաց էի լինում:

Թէրէզան եւ կարլոս լուռ միմեանց նայեցին եւ աչքերն արտասուքով լցվեցան: Թէրէզան ոչ մի խօսք չկարողացաւ արտասանել: Ս. յն բուպէին յանկարծ դուռը բացվեցաւ եւ զօրապետը

ներս մտաւ: Նորա շրթունքը դողդողում էին եւ ոտներն հազիւ շարժվում — երեւում էր, որ նա բոլոր խօսակցութիւնը լսել էր:

Թէրէզան եւ կարլոս երկուսն եւս մտաեցան նորան եւ Թէրէզան ձեռք մեկնեց նորան:

— Սրտանց ես ձեռք մեկնում ինձ:

— Ի հարկէ, թանկագին հօրեղբայր իմ:

— Ձեր բոլոր խօսակցութիւնը լսեցի, շարունակեց զօրապետը: Խնդրում եմ երեխային մի ստիպէր ճաշի գալու: Նա իրաւունք ունի չգալու, բայց Աստուած զիտէ, եւ ես ձեզ ցոյց կամմ, թէ որքան թանկ է ինձ համար նորա հայրիկը:

Կարլոսն այժմ աւելի մտերմորաբ էր նայում զօրապետին:

— Տեսնում ես, որքան բարի է հօրեղբայրդ, ասաց Թէրէզան, այժմ նորա հետ ճաշելու կգնան:

— Այո, ուրախութեամբ:

Այս պատասխանն այնքան ուրախացրեց ծերունուն որ եթէ ոյժը ներէր, նորան գրկած կտանէր: Նա պինդ համբուրեց կարլոսին եւ ձեռից բռնած սեղանատուն տարաւ:

Երբ նոքա ներս մտան, Սիլվիան արգէն այնտեղ էր եւ տհաճութեամբ նկատեց այս նոր բարեկամութիւնը: Ուստի ճաշից յետոյ նա շտապով վերկացաւ սեղանից եւ հօրեղբորն յայտնեց, որ զբօսնելու է գնում: Մերձեմին ինքն եւս վերկացաւ եւ դարձեալ զգուշացրեց Սիլվիային, որ միայնակ չգնայ:

Այս ժամերին — կէս օրից յետոյ — հազիւ կարելի է մի գիւղացուն տեսնել: Սովորաբար փո-

ղոցները դատարկ են լինում: Սիլվիան բաւական տեղ առաջ էր գնացել, երբ իր առաջից մի հաստ կնոջ տեսաւ:

Սիլվիան քայլերը շտապեցրեց, իսկ կինը կանգ առաւ — սա նոր կարգերը չհաւանօղ մի հարուստ գիւղացու կինն էր, չափազանց բամբաստասէր:

Կինն սկսեց Սիլվիային ամեն տեսակ յիմար բաներ պատմել: Սիլվիան իր կողմից մի մի բան էր աւելացնում եւ շատ համոզում, որ կինն իր երեխաներին այլ եւս ուսումնարան չուզարկէ, — որովհետեւ այնտեղ Գիւլֆիի պէս մարդու մօտ ոչինչ լաւ բան չեն սովորի: Հաստ կինը խոստացաւ, որ սմանց կհամոզէ իրանց երեխաներին հանելու, եթէ օրիորդը խորհուրդ է տալիս:

— Ի հարկէ, տեսէք ո՞րքան հպարտ է Գիւլֆին: Նա ձեր զաւակներին եւս կսովորեցնէ իւրանց ծնօղների հետ հպարտութեամբ վարվել:

— Լաւ, ասաց կինը, վաղիւ եւեթ վեց հոգի իրանց երեխաներին կհանեն ուսումնարանից:

— Այժմ մի բան եւս. ճանաչում ե՞ս Լինհարդի Լ'գէլիին, հարցրեց Սիլվիան:

— Ի հարկէ ճանաչում եմ:

— Շատ եմ խնայում ես այն աղջկան: Լսել եմ, որ մայրը շատ խոտուրթեամբ է վարվում նորա հետ: Ուզարկիր նորան մօտս մի բան ընծայեմ նորան:

Կինն այս ամենը խոստացաւ, եւ Սիլվիան շատ գոհ սրտով վերադարձաւ տուն:

Այժմ նա շատ ցաւում էր, որ հետն ոչ ոքին չէր վերցրել: Ամբողջ ճանապարհին ոչ ոք չէր երեւում: Նա շատ էր վախենում, բայց ի՛նչ պիտի

անէր. — մտում էր միայն, որ շտապելով գնար:

Այն միջոցին անտառի միջով մաւաճառն էր անցնում իր շնիկի հետ մերձակայ գիւղից, որտեղ նոր Սիլվիայի վարմունքն էին քննադատել եւ ասել էին թէ պէտք չէ այս արարքն անպատիժ թողնել:

Մաւաճառը Սիլվիային տեսաւ եւ գլխում միտք ծագեց, թէ հազիւ սորանից առաւել յարմար դէպք գտնվի նորան մի դաս տալու:

Նա կանգ առաւ ծառերի ետեւ եւ իր շնիկին Սիլվիայի վերա սկսեց գրգռել: Նա գիտէր, որ շունը չէր կծտաի, այլ միայն շորերը կպատառուէր եւ օրիորդին կվախեցնէր, ուստի հանգիստ կանգնած էր Սիլվիայի աղաղակները լսելով եւ ժամացոյցին նայելով ինքն իրան ասում. «Մի երկու բոպէ պիտի տանջվիս» եւ երբ երկու բոպէն անցաւ, նա սուլեց շանը, շունը իր տէրի մօտ վերադարձաւ եւ մաւաճառն անտառի խորքը մտաւ:

Սիլվիան շարունակում էր գոչել: Նորան թուումէր թէ շունը իրան ամբողջապէս կծոտել էր եւ ինքն մեռնելու վերա էր. շորերը պատառուոված էին եւ կտորները գետին թափված, գլխարկն եւս գլխից ընկած — Սիլվիային դժուարութեամբ կարելի էր ճանաչել:

Զօրապետն այն միջոցին որսպանին Սիլվիայի ետեւից էր ուղարկել, վախենալով, որ նորան մի բան չպատահէ: Որսպանն լսեց նորա աղաղակները եւ վաղեց Սիլվիային օգնութեան հասնելու եւ այսպիսի սարսափելի դրութեան մէջ տեսաւ նորան, որ հազիւ տուն հասցրեց:

ԼԵ.

Երբ կլաուսը զգացնում էր զօրսպետին Սիլվիայի վերաբերմամբ, ամենեւին չէր մտածում թէ նորա գուշակութիւնն այսչափ շուտ կկատարվի: Իսկ Սիլվիան մտածել անգամ չէր կարող, թէ իրան օրիորդին ձեռք տալ կհամարձակեն: Նա կարծում էր թէ շուներ կատաղած էր, եւ լաց էր լինում: Զօրսպետը վախեցած կանչել տուեց բժիշկին, բայց բժիշկը Սիլվիայի մարմնի վերա ոչ միայն խածված, այլ եւ ճանկութեամբ տեղ անգամ չգտաւ, եւ ամենքին հանգստացրեց: Ուրիշներէ ոչ ոք չէր կարծում թէ շուներ կատաղած լինէր: Բոլոր ծառաները շատ լաւ գիտէին պատճառն եւ ծածուկ շատ ուրախանում:

Սիլվիան միւս օրն առաւօտեան հանգստացաւ եւ համոզվեցաւ, որ շուներ իրան չէ կծել: Նա սկսեց պահանջել, որ շան տէրին գտնեն եւ պատժեն: Ինքն, զօրսպետն եւս ուրախ կլինէր յանցաւորին գտնելու եւ սկսեց Սիլվիային հարց ու փորձ անել թէ ինչ տեսակ շուն էր, բայց Սիլվիան վախից ոչինչ չէր նկատել. փոքրիկ շուներ նորան ահագին գազան է երեւացել, սկզբում սպիտակ է եղել յետոյ սեւաւ, բերանը զարհուրելի: Սորանից աւելի ոչինչ չէր տեսել Ի հարկէ այս նըշաններով շուներ չէր կարելի գտնել, իսկ գիւղացիներն, ինչպէս կլաուսն եւս նախագուշակել էր ասում էին, թէ ոչինչ տեղեկութիւն չունին: Ոչ ոք չէր կամենում իրանց համագիւղացուն մատնել Սիլվիան սաստիկ նեղանում էր. նորա կարծի-

քով ով որ շուն ունէր ամենքին հարկաւոր էր բանտարկել:

— Մի՞թէ ոչ ոքին չէք պատժի, անդադար ասում էր նա զօրսպետին:

— Կատուին պատժեմ մի՞թէ, ասաց զօրսպետը եւ դուրս գնաց սենեակից: Նա սաստիկ բարկացել էր Սիլվիայի վերա, ուստի Սիլվիան բոլորովին վհատեց:

Նոյն այդ րոպէին օրսպանը ներս մտաւ Սիլվիայի սենեակը եւ յայտնեց, որ մի գիւղացի կին կամենում է նորան տեսնել: Դա նորա երեկվան ծանօթ կինն էր, բայց Սիլվիան այժմ ուրիշ գործ ունէր: Նա ասաց, որ չէ կարող կնոջն ընդունել:

— Ուրեմն օրիորդին յայտնեցէք, ասաց գիւղացի կինը, որ ոչ ոքին չկարողացայ համոզել իրանց երեխաներին ուսումնարանից հանելու, ուստի իմ երեխաներիս եւս թողի այնտեղ:

Իսկ Լիլիթլին սկզբում յօժարութեամբ համոծայնել էր ամբողջ գնալ, բայց երբ այն կինն սկսել էր իր մօր խստութեան մասին խօսել, իսկոյն հոսկոյցել էր, որ այստեղ մի վատ բան է ծածկված եւ արհամարհական դէմք էր ցոյց տուել:

— Ես մայրիկիս սիրում եմ, եւ մեղաւորն ինքս էի: Եթէ դատարկ բռնեք չխօսէի, մայրիկս ինձ չէր պատժի, — եւ այս ասելով Լիլիթլին թողել էր գնացել կնոջ մօտից:

Այս բանը վերջին հարուածն էր Սիլվիայի համար:

L 2.

Արնէրի առողջութիւնն հետզհետէ վատանում էր. ջերմը սաստկանում էր եւ ոյժերը թուլանում: Ամբողջ տունը վրդովված էր. ծառաները ոտի մատերի վերայ էին շրջում, մանուկներն խաղալուց դադարեցին եւ ամենքն հանդարտ անկիւններ քաշված նստած էին: Թէրեզան գիշեր ցերեկ Արնէրի անկողնից չէր հեռանում: Բայց ամենքից աւելի դժուար էր կարծես զօրապետի դրուժիւնը: Նա ամեն բանի պատճառն իրան էր համարում. նորա արտօրակը կորել էր, քունը փախել եւ հազիւ հազ սենեակից սենեակ էր անցնում:

Այս բոլոր ժամանակ միայն Արնէրն էր հանգիստ. նորա գլուխը զուարթ էր եւ գիտակցութիւնը պարզ: Նա լաւ էր հասկանում իր դրուժիւնը, բայց մահից չէր վախենում, ընդհակառակն — նա համոզված էր, որ մեռնում է եւ հանգիստ սպասում էր վախճանին:

Հիւանդութեան վեցերորդ օրը նա ցանկացաւ ամենքին հրաժարական ողջոյն տալ: Նա թէրէզային հանգստացնում էր եւ ասում, որ այս կարճատեւ անջատումից յետոյ նոցա յախտենական միաւորութեան օրը կժամանէ: Նորան խորհուրդ էր տալիս մանուկներին առաջվան պէս պարզ կերպով կրթել եւ իրանց մերձաւորներին օգնել սովորեցնել: Յետոյ Արնէրն օրհնեց մանուկներին եւ հրաժեշտ տուեց ամենքին:

— Մի՛ վրդովիք այդքան, ասաց նա հօրեղբորը, ես վաղուց արդէն հիւանդ էի. երբէք ձեզ մի՛ մեղադրէք:

— Իսկ դուք շարունակեցէք ձեր գործը, ասաց նա Գլիւլֆին դառնալով, դուք ժողովրդի համար աւելի բան կարող էք անել քան թէ ես, իսկ քահանան կօգնէ ձեզ:

Երեկոյեան դէմ նորա ոյժերը աւելի թուլացան նա գրեթէ չէր կարողանում խօսել:

Երբ Գլիւլֆին եւ քահանան տուն վերադարձան, գիւղացիները բազմութեամբ շրջապատեցին նոցա եւ անկեղծ կարեկցութեամբ հարց ու փորձ էին անում պարոնի մասին:

Շատերը լացին, երբ իմացան, որ նորա առողջանալու քիչ յոյս կայ: Բայց երբ գիւղացիներն իրանց տներ ցրուեցան, շատերի տրամադրութիւնը փոխվեցաւ: Ոմանք սկսեցին մտածել, որ հին կարգերն առաւել լաւ էին քան թէ նորերը, եւ թէ պարոնի մեռնելուց յետոյ կարող էին իրանց դրացիներէրից շատ բան ձեռք բերել, որոնք, ուրիշ պաշտպան չունենալով, դարձեալ իրանց պիտի դիմէին ակամայ:

Միւս օրն առաւօտեան հարուստ գիւղացիները չունեւորներին արդէն յայտնապէս հասկացնում էին, որ շուտով նոցա ուրախութեան օրերին վերջ կլինի եւ ուրիշ երգեր կսկսին երգել:

Աղքատ գիւղացիներն, որոնք այնպէս եւս վըշտացած էին Արնէրի հիւանդութեամբ, բոլորովին յուզվեցան, եւս առաւել, որ իրանց մանուկներն ուսումնարանից նոյնպէս վրդովված եկան, լսելով,

որ Գլիւլֆին ուսումնարան թողնելու է, եթէ Արնէր մեռնէր: Ընկերներից ոմանք ասել էին, որ Արնէրից յետոյ նորան ոչ ոք վարձ տալու չէ:

Խեղճերը Մայիէրի եւ նորա Մարէյլի քրոջ մօտ գնացին այս բոլորի մասին խօսելու, իսկ մանուկներն վճռեցին, որ այս բանը միաբերան նոյն ինքն Գլիւլֆից հարցնեն: Բոլորովին վշտացած մանուկներն արտասուելով աղաչում էին Գլիւլֆին, որ իրանց չթողնէ եւ Գլիւլֆին այս սըրտաչարժ վարմունքից յուզված, խոստացաւ մնալ:

— Ամենեւին մի՛ վախենաք, ասացին Մայիէրն եւ նորա քոյրը իրանց մօտ եկող գիւղացիներին. Գիւղի մեծագոյն մասն Արնէրի կողմն է եւ հասկանում է, որ նորա ամեն արածը ժողովրդի օգտին է: Ես պատրաստ եմ իմ բոլոր կարողութիւնս տալու, որ նորա բոլոր սկսածը պահպանեմ, շարունակեց Մայիէրը — եւ համաձայն եմ ուսումնարանն իմ հաշուով պահել: Բայց յոյս ունիմ, որ այս պէտք չէ լինի:

Յետոյ Մայիէր քանի մի գիւղացիների մօտ գնաց, բոլոր գործերի մասին խօսեց նոցա հետ եւ շուտով սկսվեցաւ ուսումնարանը պահպանելու համար հարկաւոր գումարի ժողովարարութիւնը, իսկ գիւղի լաւագոյն մարդիկներից ընկերութիւն կազմվեցաւ Արնէրի սկսած գործը շարունակելու նպատակով: Արնէրի գործունեութիւնը թէպէտ երկարատեւ չէր, բայց արդէն պտուղներ տուեց:

Արնէրի հիւանդանալու եւ հիւանդութեան պատճառների լուրը պալատին եւս հասաւ:

Դուքսը, որ շատ համակրում էր Արնէրին, իր պալատական բժիշկին Արնէրի ուղարկեց եւ զօրապետին պատուէր տուեց, որ անմիջապէս այնտեղից հեռացնէ Միլվիային, եթէ նա որեւիցէ բանին ձեռնամուխ լինի:

Բժիշկն Արնէրին գրեթէ անյուսալի դրութեան մէջ տեսաւ, բայց իսկոյն հարկաւոր միջոցներ գործ դրեց: Արնէրն արդէն անչարժ պառկած էր, գիտակցութիւնը կորցրած: Թէրէզան վշտից եւ ցաւից ինքն իրան կորցրել էր: Բժիշկն հրամայեց, որ ամենքը դուրս գնան եւ բոլորովին հանգիստ թողնեն հիւանդին: Նորան թուեցաւ թէ Արնէր քնած է եւ սկսում է քրտնել: Մի ժամ անցաւ — հանգիստ էր: Քրտինքն աւելացաւ, — բժշկի մէջ յոյս ծնվեցաւ:

— Ի սէր Աստուծուն, ոչ մի ձայն չլինի:

Դարձեալ մի երկու ժամ անցաւ, շնչառութիւնն աւելի կանոնաւորվեցաւ, նորա ամբողջ մարմինը յորդառատ քրտինքով ծածկվեցաւ — Արնէրն ազատված էր:

ԼԷ.

Արնէրը շատ դանդաղ էր առողջանում և միայն մի շաբաթից յետոյ առաջին անգամ դուրս եկաւ սենեակից: Իսկ Բօննայի մէջ ամենքը փափագում էին նորան տեսնել, ամենքն ուրախ էին նորա առողջանալուն, մինչև անգամ այն մարդիկն եւս, որոնք Արնէրի մուծած նոր կարգերը չէին սիրում: Կարլոսն անդադար խնդրում էր հօրից, որ թոյլ

տար աշակերտներին իր մօտ դալու, եւ Արնէրն իրան բաւական կազդուրված զգալուն պէս, հըրամայեց, որ ուսումնարանի բոլոր աշակերտներին ամբողջ կանչեն: Երեխաներն եկան. նոքա ուրախ խաղում էին եւ Արնէրին պատմում թէ ինչպէս իրանք քահանայի հետ միասին աղօթում էին նորա համար եւ աշխատում էին լաւ վարվել, որ նորան հաճոյանան, իսկ փոքրիկ Բուդէլին ասաց, որ իր հայրիկն իր հարսանիքը (արդէն բաւական ժամանակ է նա նշանված էր Մայիէրի քրոջ հետ) այն օրն է նշանակել, որ օրն Արնէրն առաջին անգամ նորից Բօննալ կգայ:

— Հայրիկիդ ասա, որ երկար սպասելու չէ. մի շաբաթից յետոյ, կիրակի օրը Բօննալ կգամ:

— Մենք այն օրը մեծ տօն կկատարենք:

Եւ իրաւ ոչ թէ միայն մանուկներն, այլ եւ բոլոր ժողովուրդն Արնէրին մեծ հանդէսով ընդունեցին: Ամենքն իրանց հանդիսաւոր շորերը հագած, թմբուկներով, փողերով, սրինգներով եւ ուրիշ նուագարաններով դուրս էին թափվել նորան դիմաւորելու եւ երբ նա իջաւ կառքից, ամենքն ողջունում էին նորան ուրախ աղաղակներով. կեցցէ Արնէր, նա առողջ է, նա դարձեալ մեզ հետ է:

Բուդիի բոլոր հարսանիքաւորներն եւս այնտեղ էին: Արնէր ձեռք տուեց փեսային, իսկ Թէրէզան հարսին: Այնուհետեւ ամենքն եկեղեցի գնացին: Քահանան արդէն եկեղեցում սպասում էր նոցա: Նա համառօտ եւ զգայուն ճառ ասաց, եւ յիշեց թէ ինչպէս ինքն երեխաների հետ ար-

տասուելով աղօթում էր Արնէրի փրկութեան համար:

— Գոհանանք Ստեղծողից, որ նորան պահպանեց մեզ համար, ասելով վերջացրեց իր ճառը, ծունկ չոքելով — եւ ամենքը ծունկ չոքեցին նորա հետ:

Թէ ի՛նչ էր զգում Արնէրն այն րոպէին — թող այդ ընթերցողն ինքն պատկերացնէ, այդ նկարագրել անկարելի է:

Պատարագից յետոյ Արնէրն եւ Թէրէզան փեսային եւ հարսին իրանք բերին սեղանի առաջ: Եւ գիւղի մէջ խօսում էին, թէ ոչ ոք դեռ այնպիսի հանդիսաւոր պսակ չէր ունեցել:

Այն միջոցին քահանայի տան առաջ կիսաշրջանակի ձեւով ճաշի սեղաններ էին պատրաստել: Մէջտեղում դրված էր մի սեղան նորապսակների, Գլիւլֆիի, Արնէրի ընտանիքի եւ քահանայի համար: Սեղանների վերա շարված էին առատութեամբ ամեն տեսակ մեծարանքներ. իսկ հացկերոյթից յետոյ մինչեւ նոյն իսկ երեկոն ուրախ պարեր շարունակվեցան:

ԼԸ.


Երբ ամենքն իրանց տներ գնացին, եւ Արնէրը Թէրէզայի հետ նորապսակներին ճանապարհակցելուց յետոյ ամբողջ դարձաւ, Բուդին յիշեց, որ այն օրն իր նախկին թշնամի ծերունի Հուամէլին չէր այցելել:

Խեղճ Հուամէլն ասլուում էր ամենքի աչքից

ընկած եւ դժբաղդութեան մէջ: Միայն սակաւ անձներ, եւ ամենքից աւելի Րուբին, Լինհարդ եւ Գէրարդուէին հոգս տանում նորա վերա եւ նորան այցելում:

Վերջին ժամանակ նա միշտ հիւանդ էր լինում, երեւում էր, որ նորա օրերն եւս համարուած էին: Երբ այն օրն առաւօտեան զանգակներն հնչեցին եւ Հումմէլ լուսամտից տեսաւ, որ Րուբին եւ իր նշանածն Արնէրի եւ Թէրէզային կողքին էին գնում, նորա սիրտն առաւել մեղմացաւ, նա չոքեց եւ սկսեց աղօթել: Մի փոքր ժամանակից յետոյ այն կինը, որին Րուբին վարցել էր Հումմէլին խնամելու համար, տեսաւ, որ Հումմէլն ուշագնաց ընկել էր գետին: Կինը նորան բարձրացրեց, անկողին դրեց, ուշքի բերեց եւ նորա խնդրով սկսեց նորա համար աղօթք ասել:

Երբ Րուբին իր կնոջ հետ Հումմէլին այցելութեան եկաւ նա այլ եւս չէր կարողանում խօսել եւ միայն նոցա ժպտեց: Շուտով քահանան եւս եկաւ եւ նոքա մինչեւ ուշ գիշեր մնացին նորա մօտ. Հումմէլ կէս գիշերին հանգիստ հոգին աւանդեց:



« Ազգային գրադարան



NL0167173

83

7-46